

Օսկար  
Ուայլի

Սալոմե





# ԱՐՄԱՆ ՀԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

\*\*\*\*\*

## ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴ

### ՍԱԼՈՄԵ Դրամա մի արարով

#### Ա Ն Զ Ե Ր

ՀԵՐՈՎԴԻ ԱՆՏԻՊԱ – տետրարք Հրեաստանի  
ՅՈՒԹԱՆԱԱՆ – մարդարե  
ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ – թիկնապահների հրամանատար  
ՏԻԳԵԼԻՆ – երիտասարդ հռոմայեցի  
ԿԱՊԱՇՈՎԿԻԱՑԻ  
ՆՈՒԲԻԱՑԻ  
ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ  
ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ  
ՀԵՐՈՎԴԻԱԴԱՑԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ  
ՀՐԵԱՆԵՐ, ՆԱԶՈՎՐԵՑԻՆԵՐ և այլն  
ՍՏՐՈՒԿ  
ՆԱԱՄԱՆ – դահիճ  
ՀԵՐՈՎԴԻԱԴԱ – տետրարքի կինը  
ՍԱԼՈՄԵ  
ՍԱԼՈՄԵԻ ՍՏՐԿՈՒՀԻՆԵՐԸ

#### Բ Ե Մ՝

Հանդիսաբահին կից մի մեծ պատշաճը Հերովդի պալատում: Զինվորները կանգնել են պատշգամքի վանդակապատճին հենված: Աղ կողմը՝ մի մեծ սանդուղք: Զախ կողմը, բամի խորքում՝ մի ջրհոր, շրջապատված կանաչ, բրոնզյա պատով: Լուսնի լույս:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ. Որքան չքնա՞ղ է այս երեկո արքայադուստր Սալոմեն:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՑԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ. Նայեցիք լուսնին: Որքան տարօրինակ տեսք ունի լուսնյակը: Կարծես մի կին է, որ գերեզմանից է ելնում: Մեռած կնոջ է նման: Կարծես մեռել է որոնում նա:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ. Շատ տարօրինակ տեսք ունի: Նա նման է մի փոքրիկ արքայադուստր, որ դեղին քող է ծածկում և որի ոտներն արձաթից են: Կարծես նա մի արքայադուստր է, որի ոտները սպիտակ աղավնյակների են նման: Կարծես նա պարում է:

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԻԿԸ. Նա նման է մեռած կնոջ։ Շատ դանդաղ է շարժվում։**

### **Աղմուկ Հանդիսաբրահիմում**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Որքան աղմկալի՛ է։ Ո՞վքեր են այդ գաղանները, որ ոռնում են։**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Հրեաները։ Նրանք միշտ այդպես են։ Իրանց կրոնի մասին են վիճում նրանք։**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Ինչո՞ւ են վիճում իրանց կրոնի մասին։**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Զգիտեմ։ Նրանք միշտ այդպես են անում։ Օրինակ, փարիսեցիները պնդում են, թե հրեշտակներ կան, իսկ սադուկցիներն ասում են, թե չկան։**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Ինձ թվում է, որ ծիծաղելի է այդպիսի բաների մասին վիճելը։**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Որքա՞ն չքնաղ է այս երեկո արքայադուստր Սալոմեն։**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ. Դուք անդադար նրան եք նայում։ Դուք շատ եք նայում նրան։ Պետք չէ մարդկանց այդպես նայել… Կարող է դժբախտություն պատահել։**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Այնքան չքնաղ է նա այս երեկո։**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Տեսրարքը քնկուտ տեսք ունի։**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Այո՛, նա քնկուտ տեսք ունի։**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Նա մի բանի է նայում։**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Նա մեկին է նայում։**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Ո՞ւմ է նայում նա։**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Զգիտեմ։**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Որքան գունա՞տ է արքայադուստրը։ Ես երեք նրան այդքան գունատ չեմ տեսել։ Նա նման է սպիտակ վարդի ցոլքին, որ երերզում է արծաթյա հայելու մեջ։**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿԸ. Նրան չպետք է նայել։ Դուք նրան շատ եք նայում։**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Հերովդիադան լցրեց տեսրարքի գալաթը։**

**ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Դա Հերովդիադա թագուհին է, նա, որի գլխին մարդարտաշար ու թագ կա, որի մազերին կապույտ փոշի է ցանած։**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Այո, դա Հերովդիադան է։ Տեսրարքի կինն է դա։**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Տեսրարքը գինի շատ է սիրում։ Նա երեք տեսակ գինի է պահում – մեկը, որ Սամոթրակ կղզուց է գալիս՝ ծիրանավառ է, որպես կեսարի վերարկուն։**

**ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Ես կեսարին երբեք չեմ տեսել։**

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Մյուսը, որ կիպրոս կղզուց է գալիս, դեղին է, որպես ոսկին:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՑԻ. Ես ոսկի շատ եմ սիրում:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Երրորդը՝ Սիցիլիայի գինին է: Այդ գինին կարմիր է, որպես արյուն:

ՆՈՒԹԻԱՑԻ. Իմ երկրի աստվածներն արյուն շատ են սիրում: Տարին երկու անգամ մենք զոհ ենք բերում նրանց պատանիներ և կույսեր՝ հիսուն պատանի և հարյուր կույս: Բայց երեկ մենք նրանց երբեք չենք գոհացնում, որովհետև նրանք շատ են խստասիրտ դեպի մեզ:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՑԻ. Իմ երկրում այժմ աստվածներ չկան: Հռոմայեցիները նրանց աքսորել են: Ասում են, որ նրանք սարերում են ապաստան գտել, բայց ես դրան չեմ հավատում: Ես սարերում երեք գիշեր անցկացրի և ամեն տեղ որոնեցի նրանց, բայց չգտա: Վերջապես ես սկսեցի նրանց անունները տալ և բարձրածայն կանչել, բայց նրանք չհայտնվեցին: Ինձ թվում է, որ նրանք մեռել են:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Հրեաները պաշտում են մի աստված, որին չի կարելի տեսնել:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՑԻ. Դա ինձ համար անհասկանալի է:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Առհասարակ նրանք անտեսանելի բաների են հավատում:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՑԻ. Դա շատ ծիծաղելի է թվում ինձ:

ՅՈՒԹԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԸ. Ինձնից հետո գալու է մի ուրիշը, որ ավելի զորավոր է, քան ես: Ես արժան չեմ անգամ նրա կոշիկների կապերն արձակելու: Երբ նա գա՝ անապատը պիտի ցնծա: Անապատը պիտի ծաղկի, որպես շուշան: Կույրերի աչքերը լույս պիտի տեսնեն և խուլերի ականջները պիտի բացվեն: Նորածին մանուկը վիշապների բնին պիտի դնե իր ձեռքը և առյուծներին, բաշերից բռնած՝ պիտի տանի:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Ստիպեցեք, որ լռե դա: Դա միշտ անմիտ բաներ է ասում:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Ոչ, նա սուրբ մարդ է: Եվ շատ անուշ մարդ է նա: Ես նրան ամեն օր կերակուր եմ տանում: Նա միշտ ինձ շնորհակալություն է հայտնում:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՑԻ. Ո՞վ է նա:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Նա մարգարե է:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՑԻ. Անունն ի՞նչ է:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Թոքանաան:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՑԻ. Որտեղից է եկել:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Անապատից, ուր նա մորեխներով ու վայրի մեղրով էր սնվում: Նա ուղտի ստե էր հագած և մեջքին կաշվե գոտի ուներ: Եատ վայրի էր նրա տեսքը: Խուռն ամբոխը հետեւում էր նրան: Նա ուներ

և աշակերտներ:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Ինչի՞ մասին է խոսում նա:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Մենք չփիտենք: Երբեմն սարսափելի բաներ է ասում, բայց անկարելի է նրան հասկանալ:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Կարելի՞ է տեսնել նրան:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Ոչ, տեսրարքը չի թույլատրում:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Արքայադուստրը հովհարով է ծածկել իր երեսը: Նրա մանրիկ, սպիտակ ձեռներն այնպես են շարժվում, կարծես դեպի աղավնատուն թուզող աղավնյակներ լինեն: Նրանք ճերմակ թիթեռների են նման: Իսկ և իսկ ճերմակ թիթեռներ լինեն կարծես:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿ. Բայց ձեզ ի՞նչ: Ինչո՞ւ եք նայում նրան: Չպետք է նայել նրան: Դժբախտություն կարող է պատահել:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. (Ծրհողը ցույց տալով). Ինչ տարօրինակ բանտ է:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Դա մի հին ջրհոր է:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ.Հին ջրհոր: Երկի անառողջ տեղ է:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Ոչ: Օրինակ, տեսրարքի եղբայրը, նրա մեծ եղբայրը, Հերովդիադա թագուհու առաջին ամուսինը 12 տարի փակված էր այդտեղ և դրանից չմեռավ: Վերջը պետք եղավ նրան խեղդամահ անել:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Խեղդամա՞հ: Ո՞վ համարձակվեց այդ անելու:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ.(ցույց տալով դահճին, որ մի հսկա նեղք է). Սա, նաամանը:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Եվ չվախեցա՞վ:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Ոչ: Տեսրարքն ուղարկել էր իր մատանին:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Ո՞ր մատանին:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Մահվան մատանին: Եվ դրա համար էլ սա չէր պախենում:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Բայց և այնպես մի թագավոր խեղդե՛լ՝ սարսափելի՞ է:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Ինչո՞ւ: Թագավորներն էլ միայն մի վիզ ունեն, ինչպես և մյուս մարդիկ:

ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ. Ինձ սարսափելի է թվում այդ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Այքայադուստրը վեր է ելնում: Նա հեռանում է սեղանից: Սաստիկ թախծոտ է նրա դեմքը: ԱՇ, նա այստեղ է գալիս: Այո՛, նա մեզ մոտ է գալիս: Որքան գունա՛տ է նա: Ես երբեք նրան այդքան գունատ չեմ տեսել:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱՅԻ ՄԱՆԿԱՎԻԿ. Մի նայեք նրան: Ես ձեզ խնդրում եմ, որ չնայեք նրան:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Նա մոլորված աղավնու է նման: Նա նման է մի նարգիսի, որ տատանվում է հողմի առաջ: Նա արծաթյա ծաղկի է նման:

**ՍԱԼՈՄԵ.** Ես այնտեղ չեմ մնա: Ես չեմ կարող մնալ: Ինչո՞ւ է տեսարարքն իր խլուրդի աչքերով, դոդդոջուն արտեանունքների տակից նայում ինձ: Տարօրինակ է, որ իմ մոր ամուսինն ինձ այդպես է նայում: Ես չգիտեմ դրանով ի՞նչ է ուզում ասել: Ոչ, ես այդ գիտեմ:

**ԵՐԻԾԱՍԱՐԴ** ՍԻՐԻԱՅԻ. Դուք թողիք խնջույքն ու եկաք, արքայադուստր:

**ՍԱԼՈՄԵ.** Որքան թա՛րմ է այստեղ օդը: Վերջապես այստեղ կարելի է շունչ քաշել: Այնտեղ, ներսը երուսաղեմի հրեաներն են գգգզում իրար իրանց ծիծաղելի ծեսերի համար և բարբարոսները, որ անդադար խմում են գինին ու հատակի սալերին թափում, և զմյուսնացի հույները՝ ներկած աչքերով, նշխած ծնրաներով և օղակ-օղակ գանգրացրած մազերով: Եվ եգիպտացիները, որ լուռ են ու խորամանկ, իրանց աշմյա եղունգներով և շագանակագույն վերաբկուներով: Եվ հռոմայեցիք իրանց կոպառությամբ, ծանր շարժվածքով ու հայշոյանքներով: ԱՇ, ինչպես ատում եմ ես հռոմայեցիներին: Դրանք ռամիկներ են, որ իրանց իշխան են ձևացնում:

**ԵՐԻԾԱՍԱՐԴ** ՍԻՐԻԱՅԻ. Արդյոք չէի՞ք կամենա նստել, արքայադուստր:

**ՀԵՐՈՎԴԻԿԱՅԱՅԻ** ՄԱՆԿԱՎԻԿԻ. Նրա հետ ինչո՞ւ եք խոսում: Նրան ինչո՞ւ եք նայում: Օ, գժբախտություն կպատահի:

**ՍԱԼՈՄԵ.** Ինչ լա՞վ է նայել լուսնին: Նա արծաթյա դրամի է նման: Կարծես մի փոքրիկ արծաթյա ծաղիկ է: Նա սառն է և ողջախոռ՝ լուսինը: Ես հավատացած եմ, որ նա կույս է: Նա կույսի գեղեցկություն ունի: Այո՛, նա կույս է: Նա իրան երբեք չէ ասլականել: Նա բնավ անձնատուր չէ եղել մարդկանց, ինչպես մյուս դիցուհիները:

**ՑՈՔԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԼ.** Եկել է նա, Տերը: Եկել է Մարդո Որդին: Հուշկապարիկները թաքնվել են գետերում և ջրահարսները թողել գետերն ու պահվել են տերևների մեջ, անտառներում:

**ՍԱԼՈՄԵ.** Այդ ո՞վ էր աղաղակեց:

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ.** Դա մարդարեն էր, արքայադուստր:

**ՍԱԼՈՄԵ.** ԱՇ, մարդարեն, նա՛, որից տեսրարքն այնպես վախենո՞ւմ է:

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ.** Մենք ոչինչ չգիտենք, արքայադուստր: Դա Ցոքանաան մարդարեն է:

**ԵՐԻԾԱՍԱՐԴ** ՍԻՐԻԱՅԻ. Եթե կամենում եք, արքայադուստր, ես կհրամայեմ, որ ձեր գահավորակը բերեն: Այգում այնպես լա՞վ է որ:

**ՍԱԼՈՄԵ.** Նա սարսափելի բաներ է ասում – և այդ իմ մոր մասին է, այնպես չէ՞:

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ.** Մենք նրա ասածները չենք հասկանում, արքայադուստր:

**ՍԱԼՈՄԵ . Այո՛, նա մորս մասին հրեշտավոր բաներ է ասում:**

**ՍՏՐՈՒԿ. Արքայադուստր, տետրարքը խնդրում է, որ դուք հանդիսասրահ դառնաք:**

**ՍԱԼՈՄԵ . Ես այնտեղ չեմ վերադառնա:**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Ներեցեք, արքայադուստր, բայց եթե դուք չկերպառնաք, կարող է դժբախտություն պատահել:**

**ՍԱԼՈՄԵ . Մե՞ր է նա, այդ մարգարեն:**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Լավ է վերադառնաք, արքայադուստր: Թույլ տվեք ձեզ դեպի հանդիսարահ ուղեկցեմ:**

**ՍԱԼՈՄԵ . Մերունի՞ է այդ մարգարեն:**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Ոչ, արքայադուստր, նա բոլորովին երիտասարդ է:**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Ոչ ոք չգիտե: Ոմանք ասում են, թե դա եղիան է:**

**ՍԱԼՈՄԵ . Ո՞վ է եղիան:**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Այս երկրի շատ հին մարգարեներից մեկը, արքայադուստր:**

**ՍՏՐՈՒԿ. Արդյոք ի՞նչ պատասխան պիտի տամ ես տետրարքին արքայադստեր կողմից:**

**ՑՈՔԱՆԱԱՆԻ ԶԱԹՆԸ. Մի ցնծա, Պաղեստին երկիր, որովհետև նրա խարազանը, որով խարազանում է քեզ՝ կոտրված է: Որովհետև օճի սերնդից պիտի ծագե Արքայօծիկը և դրանից ծնվողը թուչուններին պիտի կլանե:**

**ՍԱԼՈՄԵ . Ինչ տարօրինա՛կ ձայն է: Ես շատ կուզեի դրա հետ խոսել:**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Վախենամ՝ դա անկարելի լինի, արքայադուստր: Տետրարքը չի ուզում, որ դրա հետ խոսեն: Նա քահանայապետին անգամ արգելել է խոսել դրա հետ:**

**ՍԱԼՈՄԵ . Ես ուզում եմ խոսել դրա հետ:**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Դա անկարելի է, արքայադուստր:**

**ՍԱԼՈՄԵ . Ես այդ ուզո՞ւմ եմ:**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Արդարն, արքայադուստր, ավելի լավ կլինի հանդիսարահ վերադառնաք:**

**ՍԱԼՈՄԵ . Դուքս բերեք մարգարեին:**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Մենք չենք համարձակվում, արքայադուստր:**

**ՍԱԼՈՄԵ (մոտենալով ջրհորին և ներս նայելով). Որքան մո՛ւթ է այնտեղ: Երեսի սոսկալի է լինել մի այդպիսի մթին խորշում: Դա գերեզմանի է նման: (Զինվորներին): Զլսեցի՞ք ինձ: Դուքս հանեցեք նրան: Ես ուզում եմ նրան տեսնել:**

**ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Խնդրում եմ, արքայադուստր, մեզնից մի պահանջեք այդ:**

**ՍԱԼՈՄԵ . Դուք ինձ սպասել եք տալիս:**

**ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Մեր կյանքը ձեզ է պատկանում, արքայադուստր,**

Սակայն մենք չեն կարող անել այն, ինչ դուք եք պահանջում մեզնից: Վերջապես դուք մե՞զ չպիտի դիմեք:

**ԱԱԼՈՄԵ** (երիտասարդ սիրիացուն նայելով). ԱՀՇ...

ՀԵՐՈՎԴԻԱՆԱՑԻ ՄԱՆԿԱԿԻԿ. Օ՛, արդյոք ի՞նչ պիտի պատահի այժմ: Ես համոզված եմ, որ դժբախտություն կպատահի:

**ԱԱԼՈՄԵ** (երիտասարդ սիրիացուն մոտենալով). Դուք այդ կանեք ինձ համար, այնպես չէ՞: Նարրաբոթ: Կանեք դուք ինձ համար: Ես ձեզ հետ միշտ քաղցր էի վարկում: Դուք ինձ համար կանեք այդ, այնպես չէ՞: Ես միայն տեսնել եմ ուզում նրան, այդ տարօրինակ մարգարեին: Նրա մասին այնքան են իսունել, որ ... ես այնքան հաճախ եմ տեսնել տեսրարքին նրա մասին խոսելիս: Ինձ թվում է, որ տեսրարքը վախենում է նրանից: Գուցե դուք էլ, նարրաբոթ, գուցե դուք էլ եք վախենում:

ԵԲԻՏԱԱԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ. Ես չեմ վախենում, արքայադուստր, ես ոչ ոքից չեմ վախենում: Սակայն տեսրարքը խստիվ արգելել է այդ գրի խուփը բանալու:

**ԱԱԼՈՄԵ**. Ինձ համար դուք կանեք այդ, Նարրաբոթ: Եվ վաղը, երբ ես պատգարակի վրա նստած անցնեմ կառքեր վաճառողների դարպասի միջով, գուցե ձեզ համար մի փոքրիկ ծաղիկ ցած նետեմ, մի փոքրիկ, կանաչ ծաղիկ:

**ԵԲԻՏԱԱԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ**. Զեմ կարող, չեմ կարող, արքայադուստր:

**ԱԱՄՈՒԼԵ** (ժպտալով). Դուք ինձ համար կանեք այդ, Նարրաբոթ: Դուք շատ լավ գիտեք, որ կանեք այդ ինձ համար: Եվ վաղը, երբ ես պատգարակի վրա նստած անցնեմ կառք գնողների դարպասների միջով, ես կնայեմ ձեզ իմ մարմաշ քողի տակից, Նարրաբոթ: Գուցե ես ժպտամ ձեզ: Նայեցե՞ք ինձ, Նարրաբոթ, նայեցե՞ք ինձ: ԱՇ, դուք շատ լավ գիտեք, որ պիտի անեք այն, ինչ ես ինդրում եմ ձեզնից: Դուք այդ լավ գիտեք, այնպես չէ՞ Նարրաբոթ: Ես լավ գիտեմ:

ԵԲԻՏԱԱԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ (նշան է անում երրորդ զինվորին). Դուրս բերեք մարգարեին... արքայադուստր Սալոմեն ուզում է տեսնել նրան:

**ԱԱԼՈՄԵ**. ԱՇ...

ՀԵՐՈՎԴԻԱՆԱՑԻ ՄԱՆԿԱԿԻԿ. Օ՛, որքան տարօրինակ տեսք ունի լուսինը: Կարծես մեռելի ձեռք է, որ իրան ծածկելու համար պատան է որոնում:

**ԵԲԻՏԱԱԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ**. Շատ տարօրինակ տեսք ունի նա: Կարծես մի փոքրիկ արքայադուստր լինի, որ սադափի աչքեր ունի: Մարմաշ ամպերի միջից ժպտում է նա, որպես մի փոքրիկ արքայադուստր:

**Մարգարեն ՋՐՀՈՐԻՑ դուքս է ելնում: Սալոմեն նայում է նրան ու ետ քաշվում**

**ՑՈՔԱՆԱԱՆ. Ո՞ւր է նա, որի պղծության բաժակը լցված է արդեն: Ո՞ւր**

է նա, որ արծաթյա զգեստով մեռնելու է մի օր ժողովրդի առջև: Ասացեք նրան թող գա, լսե այն մարդու ձայնը, որ աղաղակում էր անապատում և արքայական պալատներում:

**ՍԱԼՈՄԵ.** Ո՞ւմ մասին է խոսում նա:

**ԵՐԻԾԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ.** Հայոնի չէ, արքայադո՛ւստր:

**ՅՈՔԱՆԱԱՆ.** Ո՞ւր է նա, որ տեսնելով պատերի վրա մարդկային պատկերներ, քաղղեացիների ներկանկար պատկերները տեսնելով, իր ցանկասեր աչքերին հուր՝ Քաղղեա դեսպաններ ուղարկեց:

**ՍԱԼՈՄԵ.** Նա մորս մասին է խոսում:

**ԵՐԻԾԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Ո՛չ,** արքայադուստր:

**ՍԱԼՈՄԵ. Այո՛,** մորս մասին է:

**ՅՈՔԱՆԱԱՆ.** Ո՞ւր է նա, որ անձնատուր եղավ ասորեցոց զորապետներին, որոնք իրանց մեջքին գոտի են կապում և գլուխներին խույր են կրում: Ո՞ւր է նա, որ անձնատուր է լինում եղիպտացի պատանիներին, որոնք կտավ են հագնում և ծիրանի ու սոկի վահաններ ու արծաթյա սաղավարտներ են կրում և որոնք հաղթանդամ են: Ասացեք նրան, թող վեր ելնե իր պագչոտության մահճից, որպեսզի լսե այն մարդուն, որ Տիրոջ ճանապարհն է պատրաստում: Ասացեք թող զղջա: Եվ եթե նա չի զղջա և կմնա իր գարշագործության մեջ, ասացեք նրան թող գա, որովհետև Տերը վերցրել է արդեն իր խարազանը:

**ՍԱԼՈՄԵ. Բայց նա սոսկալի՛ է, սոսկալի՛...**

**ԵՐԻԾԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Այստեղ մի մնա՛ք, արքայադուստր, խնդրում եմ ձեզ:**

**ՍԱԼՈՄԵ.** Ամենից սարսափելին նրա աչքերն են: Կարծես Տիրոսյան գորգի վրա ջահերի կրակով բացված խորշեր լինեն: Կարծես սև քարանձավներ են, ուր վիշապներն են ննջում, եղիպտոսի սև քարանձավները, ուր վիշապներն են ապաստանում: Կարծես սև լճեր լինեն ցնորական լուսիններով մրրկված: Ինչպե՞ս եք կարծում նա նորից պիտի խոսի՞...

**ԵՐԻԾԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Այստեղ մի մնա՛ք, արքայադուստր, ես ձեզ խնդրում եմ, մի՛ մնաք այստեղ:**

**ՍԱԼՈՄԵ.** Որքան վորի՛տ է նա : Կարծես մի նրբագիծ փղոսկրյա պատկեր լինի: Կարծես արծաթյա մի պատկեր է: Ես հավատացած եմ, որ նա նույնքան ողջախոհ է, որքան և լուսինը: Կարծես արծաթյա մի ճառագայթ է նա: Նրա մարմինը շատ սառն է, ինչպես փղոսկր: Ես մոտիկից եմ ուզում նայել նրան:

**ԵՐԻԾԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Ո՛չ, ո՛չ,** արքայադուստր:

**ՍԱԼՈՄԵ. Ես մոտիկից պիտի նայեմ նրան:**

**ԵՐԻԾԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՅԻ. Արքայադո՛ւստր, արքայադո՛ւստր:**

**ՅՈՔԱՆԱԱՆ.** Ո՞վ է այդ կինը, որ նայում է ինձ: Ես չեմ ուզում, որ նա

**ինձ նայե:** Ինչո՞ւ է նայում ինձ իր ոսկեղեն աչքերօվ, ոսկենիրկ թարթիչների տակից: Ես չգիտեմ, ո՞վ է նա: Ես այդ չեմ ուզում իմանալ:

**Ասացեք նրան՝ թող հեռանա:** Նրա հետ չէ, որ ես ուզում իմ խոսել:

**ՍԱԼՈՄԵ.** Ես Սալոմեն եմ, Հերովդիադայի դուստրը, արքյադուստրը Հրեաստանի:

**ՅՈՒԹԱՆԱԱՆ.** Հեռացի՛ր, դուստր Բաբելոնի: Մի մոտենա Տիրոջ ընտրյալին: Քո մայրն իր պղծության գինիով լցրեց երկիրը և նրա մեղքերի աղաղակն Աստծո ականջին հասավ:

**ՍԱԼՈՄԵ.** Նորից խոսիր, Յոքանաան, քո ձայն արբեցնում է ինձ:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ.** Արքայադո՛ւստր, արքայադո՛ւստր, արքայադո՛ւստր:

**ՍԱԼՈՄԵ.** Նորից խոսիր, խոսիր նորից, Յոքանաան, և ասա ի՞նչ պիտի անեմ ես:

**ՅՈՒԹԱՆԱԱՆ.** Ինձ մի՛ մերձենաք, դուստր Սողոմի, այլ սև քողով ծածկեցեք ձեր երեսը, մոխիր ցանեցեք ձեր գլխին և գնացեք անապատ՝ Մարդո Որդուն որոնելու:

**ՍԱԼՈՄԵ.** Ո՞վ է նա՝ Մարդո Որդին: Արդյոք նա ևս նույնքան գեղեցի՞կ է, որքան գո՞ւ, Յոքանաան:

**ՅՈՒԹԱՆԱԱՆ.** Հեռացի՛ր, Հեռացի՛ր... Ես լսում եմ, ինչպես պալատում մահվան հրեշտակի թերեն են թափահարվում:

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ.** Արքայադուստր, աղաչում եմ ձեզ, վերադաբե՛ք:

**ՅՈՒԹԱՆԱԱՆ.** Հրեշտակ Աստծո, ի՞նչ ես որոնում այստեղ, դաշույնը ձեռքիդ, ո՞ւմ ես որոնում այս ամբարիշտ պալատում: Դեռ չի հասել այն մարդու օրը, որն արծաթե հագուստով պիտի մեռնի:

**ՍԱԼՈՄԵ.** Յոքանաան:

**ՅՈՒԹԱՆԱԱՆ.** Ո՞վ է խոսում:

**ՍԱԼՈՄԵ.** Յոքանաան, ես սիրահարված եմ քո մարմնի վրա: Քո մարմինն սպիտակ է, որպես արոտի շուշանը, որին հնձվորը դեռ չի դիպել: Քո մարմինն սպիտակ է, որպես սարերում պառկած ձյունը, որպես ձյունը, որ պառկած է Հրեաստանի սարերում և գեպի հովիտը չի իջնում: Վարդերն Արարիայի թագուհու այգում այնպես սպիտակ չեն, ինչպես քո մարմինը: Ո՛չ վարդերն Արարիայի թագուհու այգում, ո՛չ արշալույսի քայլերը, որ դողողում են տերեների վրա, ո՛չ լուսնի լանջը, երբ նա հանգչում է ծովի լանջին: Զկա՛ աշխարհում ոչ մի բան, այնպես սպիտակ լինի, ինչպես քո մարմինը: Թույլ տուր դիպչեմ քո մարմնին:

**ՅՈՒԹԱՆԱԱՆ.** Հեռացի՛ր, դուստր Բաբելոնի: Կնոջ միջոցով է, որ չարն աշխարհ է մտել: Հետո մի՛ խոսեք: Ես չեմ ուզում քեզ լսել: Ես ոչ ոքի չեմ լսում, բացի Աստծուց:

**ՍԱԼՈՄԵ.** Քո մարմինը զգվելի՞ է: Նա բորոտի մարմնի է նման: Նա

նման է սպիտակեցրած պատի, որի վրա իժեր են սողում, որի վրա կարիճներն են բուն դրել: Նա նման է սպիտակեցրած մի դագաղի, որ զաղերելի բաներով է լցված: Սարսափելի՛ է, սարսափելի՛ է քո մարմինը: Ես քո մազերի վրա եմ սիրահարված, Յոքանաան: Քո մազերը նման են խաղողի ողկույզներին, սև խաղողի ողկույզներին, որ կախվում են եղեմի վազերից եղեմականների երկրում: Քո մազերը՝ որպես Լիբանանու եղեին, որպես Լիբանանու հակա եղեին, որ ստվեր է տալիս առյուծներին և ավագակներին, որոնք ուղղում են ցերեկով թաքնված մնալ: Այն երկար ու սև գիշերները, գիշերները, երբ լուսինը դուրս չի գալիս, երբ աստղերը երկչուտ են, այդպես սև չեն: Լոռությունը, որ ննջում է անտառներում, այդպես սև չէ: Զկա՛ աշխարհում ոչինչ, որ այնպես սև լինի, ինչպես քո մազերը: Թույլ տուր դիմացեմ քո մազերին:

ՅՈՒԹԱՆԱԱՆ. Հեռացի՛ր, Սողոմի դուստր: Մի՛ դիպչիր ինձ: Զպետք է պղծել Տիրոջ տաճարը:

ՍԱԼՈՄԵ. Գարշելի՛ են քո մազերը: Ցեխով ու փոշով են պատած նրանք: Կարծես փշյա պսակ է, որ դրել են քո ճակատին: Կարծես սև օձերի մի կծիկ է, որ գալարվում է քո վզի շուրջը: Ես չեմ սիրում քո մազերը: Քո բերանն է, որ սիրում եմ ես, Յոքանաան: Քո բերանը նման է շիկակարմիր գոտու փղոսկոյա աշտարակի վրա: Նա նման է նոռան, որ կիսված է փղոսկոյա դանակով: Նոռան ծաղիկները, որ բացվում են Տիրոսում և ավելի կարմիր, քան վարդերը, այդպես կարմիր չեն: Փողերի կարմիր ճիչը, որ թագավորների գալուստն է ավետում, որ ահ ու սարսափ է ներշնչում թշնամիներին – այդքան կարմիր չէ: Քո բերանն ավելի կարմիր է, քան այն մարդկանց ոտքերը, որոնք խալող են կոխում հնձաններում: Քո բերանն ավելի կարմիր է, քան ոտներն այն աղավնիների, որոնք տաճարներում են ապրում և որոնց քրմերն են կերակրում: Քո բերանն ավելի կարմիր է, քան ոտներն այն մարդու, որ անտառից է վերադառնում, ուր առյուծ է սպանել և ոսկեփայլ վագրեր տեսել: Քո բերանը նման է մարջանի ճյուղի, որ ձկնորսները գտնում են ծովի խավարում և պահում են թագավորների համար: Նա նման է կարմրատեղի, որ մոաթիացիները գտնում են Մոաթիայի հանքերում և որը խլում են նրանցից թագավորները: Քո բերանը՝ որպես աղեղը պարսից թագավորի, որ կարմրատեղովն է ներկված և որի ծայրերը մարջան են: Զկա աշխարհում ոչինչ, որ այնպես կարմիր լինի, ինչպես քո բերանը: Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՒԹԱՆԱԱՆ. Երբե՛ք, դուստր Բարելոնի: Սողոմի դուստր՝ Երբե՛ք:

ՍԱԼՈՄԵ. Ես կհամբուրեմ քո բերանը, Յոքանաան: Ես կհամբուրեմ քո բերանը:

ԵՐԻԾԱՍԱՐԴ ՍԻՐԻԱԾԻ. Արքայադր՛ ւստր, արքայադր՛ ւստր, դու, որ նման ես մրտի հասմիկին, դու աղավնյակների աղավնյակ, այդ մարդուն մի՛ նայիր, մի՛ նայիր դրան: Այդպիսի բաներ մի ասիր նրան: Ես այդ չեմ կարող

տանել... Արքայադո՛ւստր, արքայադո՛ւստր, մի՛ ասիր այդպիսի բաներ:  
ՍԱԼՈՄԵ. Ես կհամբուրեմ քո բերանը, Թոքանաան՛:  
ԵՐԻՏԱՍԱԱՐԴ ՍԻՐԻԱՑԻ. ԱՇ...

### Սպանում է ինքն իրան և ընկնում Սալոմեի և Յոքանաանի մեջտեղը

ՀԵՐՈՎԴԻԱՆԻԱԹԻ ՄԱՆԿԼԱՎԻԿ. Երիտասարդ սիրիացին ինքնասպան եղավ: Երիտասարդ հրամանատարն սպանեց իրան: Ինքն իրան սպանեց նա, որ իմ ընկերն էր: Ես նրան նվիրել էի մի տփիկ՝ լի անուշահոտ ջրով և արծաթյա օղեր: Եվ ահա նա սպանված է: ԱՇ, մի՞թե նա չէր գուշակում, որ դժբախտություն պիտի պատահի: Ես ինքս գուշակեցի և ահա եկավ դժբախտությունը: Ես լավ գիտեի, որ լուսինը մեռել է որոնում, բայց չգիտեի, որ սրան էր որոնում լուսնյակը: ԱՇ, ինչո՞ւ ես լուսնից չթաքցրի նրան: Եթե թաքցնեի քարանձափում, լուսինը նրան չէր տեսնի:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Արքայադուստր, ահա երիտասարդ հրամանատարն ինքն իրան սպանեց:

ՍԱԼՈՄԵ. Թույլ տուր համբուրեմ քո բերանը, Թոքանաան:

ՅՈՔԱՆԱԱՆ. Մի՞թե ահ չունեք դուք, զուստր Հերովդիադայի: Մի՞թե չասացի ես ձեզ, որ լսում եմ, ինչպես պալատում մահվան հրեշտակն իր թևերն է թափահարում: Եվ այդ հրեշտակը՝ մի՞թե նա չի եկել արդեն:

ՍԱԼՈՄԵ. Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՔԱՆԱԱՆ. Դուստր շնության, կա միայն մի մարդ, որ կարող է քեզ փրկել: Դա այն մարդն է, որի մասին ասացի քեզ: Գնացե՛ք, որոնեցեք նրան: Այժմ նա Գալիլիական ծովի վրա է և նավակում քարոզում է իր աշակերտներին: Սունկ չոքեցեք ծովափին և նրա անունը տվեք ու խնդրեցեք: Եվ երբ ձեզ մոտ գա, որովհետև նա գնում է ամենքի մոտ, ով կանչում է, նրա ոտներն ընկեք և ձեր մեղքերին թողություն խնդրեցեք:

ՍԱԼՈՄԵ. Թույլ տուր համբուրեմ քո բերանը:

ՅՈՔԱՆԱԱՆ. Անե՛ծք քեզ, արյունախոնությամբ պղծված մոր դուստր, անե՛ծք քեզ:

ՍԱԼՈՄԵ. Ես կհամբուրեմ քո բերանը, Թոքանաան:

ՅՈՔԱՆԱԱՆ. Ես քեզ չեմ ուզում նայել: Ես չեմ նայի քեզ: Դու անիծված ես, Սալոմե, դու անիծվա՛ծ ես:

### Իշնում է ջրհորը

ՍԱԼՈՄԵ. Ես կհամբուրեմ քո բերանը, Թոքանաան, ես կհամբուրեմ քո բերանը:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Դիակը պետք է տանել մի ուրիշ տեղ: Տետրարքը դիակ տեսնել չի սիրում, բացի իր սպանած մարդկանց դիակներից:

**Կարգեցիք:**

**ՀԵՐՈՎԴԻ.** Ես չեմ հրամայել, որ սպանեն նրան:

**ԵՐԿՐՈՐԴԻ** ԶԻՆՎՈՐ. Նա ինքնասպան եղավ, Տեր:

**ՀԵՐՈՎԴԻ.** ԻՆՉՈ՞ւ: Զէ՞ որ ես նրան հրամանատար կարգեցի:

**ԵՐԿՐՈՐԴԻ** ԶԻՆՎՈՐ. Մենք չգիտենք: Տեր: Սակայն նա ինքն սպանեց իրան:

**ՀԵՐՈՎԴԻ.** Այդ ինձ տարօրինակ է թվում: Ես կարծում էի, թե միայն հռոմեացի փիլիսոփաներն են ինքնասպանություն գործում: Այնպես չէ՞ Տիգելին, Հռոմում փիլիսոփաներն իրանք իրանց սպանում են:

**ՏԻԳԵԼԻՆ.** Կան այդպիսինները, Տեր, որոնք իրանց սպանում են: Այդ՝ սաոյիկյաններն են: Նրանք շատ կոպիտ մարդիկ են: Վերջապես նրանք շատ ծիծաղելի մարդիկ են: Ինձ թվում է, որ շատ ծիծաղելի են նրանք:

**ՀԵՐՈՎԴԻ.** Ինձ էլ այդպես է թվում: Ինքն իրան սպանելը ծիծաղելի բան է:

**ՏԻԳԵԼԻՆ.** Հռոմում նրանց շատ են ծաղրում: Կայսրը նրանց մասին երգիծական պոեմ է գրել: Ամեն տեղ կրկնում են այն:

**ՀԵՐՈՎԴԻ.** ԱՇ, նա երգիծական պոեմ է գրել նրանց մասին: Կեսարը զարմանալի՞ է: Նա ամեն ինչ կարող է անել: Տարօրինակ է, որ ինքնասպան է եղել երիտասարդ սիրիացին: Ես նրան ափսոսում եմ: Այո՛, ես շատ եմ ափսոսում: Որովհետև նա գեղեցիկ էր: Նույնիսկ շատ էր գեղեցիկ: Նա շատ նվազուն աչքեր ուներ: Ես հիշում եմ, տեսել եմ նրան այդպիսի նվազուն աչքերով Սալոմեին նայելիս: Ճիշտ, ինձ թվաց, որ նա Սալոմեին շատ է նայում:

**ՀԵՐՈՎԴԻՒԱԴԱ.** Կան և ուրիշները, որ Սալոմեին շա՛տ են նայում:

**ՀԵՐՈՎԴԻ.** Նրա հայրը թագավոր էր, ես նրան արտաքսեցի իր թագավորությունից: Եվ նրա մորը, որ թագուհի էր, դուք ստրկուհի դարձրիք, Հերովդիադա: Այդպիսով նա այստեղ հյուրի պես էր: Եվ դրա համար ես նրան հրամանատար նշանակցի: Ես ափսոսում եմ, որ նա մեռել է: Սակայն ինչո՞ւ եք դիակն այստեղ թողել: Պետք է տանել այստեղից: Ես չեմ ուզում տեսնել: Տարեք դիակը:

### Դիակը տանում են

Այստեղ ցուրտ է: Այստեղ քամի է: Այնպես չէ՞ այստեղ քամի է:

**ՀԵՐՈՎԴԻՒԱԴԱ.** Բոլորովին ոչ: Այստեղ քամի չկա:

**ՀԵՐՈՎԴԻ.** Ոչ, այստեղ քամի է: Եվ ես գգում եմ օդում թևերի թափահարումի նման մի բան: Հսկայական թևերի թափահարումի նման մի բան: Դուք չե՞ք լսում:

**ՀԵՐՈՎԴԻՒԱԴԱ.** Ես ոչինչ չեմ լսում:

**ՀԵՐՈՎԴԻ.** Ես էլ այլքս չեմ լսում: Բայց լսում էի: Անշուշտ, դա քամի էր:

**Անցավ:** Բայց ոչ, ես նորից եմ լսում: Դուք չե՞ք լսում: Դա իսկ և իսկ թերերի թափահարումի է նման:

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ.** Ես ձեզ ասում եմ, որ ոչինչ չկա: Դուք հիվանդ եք; Վերադառնանաք:

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ.** Ես հիվանդ չեմ: Ձեր դուստրն է հիվանդ: Նա շատ հիվանդոտ տեսք ունի, ձեր դուստրը: Ես նրան երբեք չեմ տեսել այդքան գունատ:

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ.** Ես ձեզ ասացի, որ նրան չնայեք:

**ՀԵՐՈՎԴ. Գինի լցընեք:**

### Գինի են բերում

**Սալոմե, եկե՛ք այստեղ, մի քիչ գինի խմեցեք հետո, ես ազնիվ գինի ունիմ: Ինքը կեսարն է ուղարկել այդ գինին: Թրջեցեք նրանով ձեր մանրիկ կարմիր շրթունքները, իսկ հետո ես կդատարկեմ բաժակը:**

**ՍԱԼՈՄԵ. Ես ծարավ չեմ, տեսրարք:**

**ՀԵՐՈՎԴ. Դուք լսում եք, ինչպի՞ն է պատասխանում ինձ նա, ձեր դո՛ւստրը:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ. Ես կարծում եմ, որ նա շատ իրավացի է: Ինչո՞ւ դուք շարունակ նրան եք նայում:**

**ՀԵՐՈՎԴ. Միրգ բերեք:**

### Միրգ են բերում

**Սալոմե՛, եկեք հետո միրգ կերեք: Ես շատ եմ սիրում տեսնել մրգի վրա քո մանրիկ ատամների հետքերը: Մի փոքրիկ կտոր կծեցեք այս պտուղից, և մնացյալը կուտեմ ես:**

**ՍԱԼՈՄԵ. Ես քաղցած չեմ, տեսրարք:**

**ՀԵՐՈՎԴ /ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ/ն. Ահա թե ինչպես եք դաստիարակել դուք նրան, ձեր դստերը:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ. Իմ դուստրն ու ես արքայական ծագում ունենք: Մինչդեռ դո՛ւ – քո պապը ուղարած է եղել: Բացի այդ, նաև ավագակ է նղել:**

**ՀԵՐՈՎԴ. Դու սո՛ւտ ես ասում:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ. Դու շատ լավ գիտես, որ այդ ճշմարիտ է:**

**ՀԵՐՈՎԴ. Սալոմե՛, եկ նստիր կողքիս: Ես քե՛զ կտամ քո մոր դահը:**

**ՍԱԼՈՄԵ. Ես հոգնած չեմ, տեսրարք:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱԱ. Դուք լա՞վ եք տեսնում, թե ինչ կարծիք ունի նա ձեր մասին:**

**ՀԵՐՈՎԴ. Բերե՛ք... ի՞նչ էի ուվզում ես: Զգիտեմ: Ա՛հ, մտաքերեցի:**

**ՅՈՒՔԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԸ. Հասել է ժամանակը: Այն, ինչ ես գուշակել էի,**

կատարվեց, ասում է Աստված: Հասավ այն օրը, որի մասին խոսում էի ես:  
ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Լուցրե՛ք դրան: Ես նրա ձայնը չեմ ուղում լսել: Այդ  
մարդն անընդհատ հայշոյանք է թափում իմ վրա:

ՀԵՐՈՎԴ. Նա ձեր մասին ոչինչ չի ասում: Բացի դրանից, նա շատ մեծ  
մարդարենք է:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Մարդարեներին ես չեմ հավատում: Մի՞թե մարդ  
կարող է գուշակել, թե ի՞նչ պիտի պատահի: Այդ ոչ ոք չգիտե: Բացի  
դրանից, նա միշտ վիրավորում է ինձ: Բայց ինձ թվում է, որ դուք  
վախենում եք նրանից... Այո՛, ես լավ գիտեմ, որ դուք նրանից վախենում  
եք:

ՀԵՐՈՎԴ. Ես նրանից չեմ վախենում: Ես ոչ ոքից չեմ վախենում:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Այո՛, դուք նրանից վախենում եք: Եթե չեք վախենում,  
ապա ինչո՞ւ նրան հրեաներին չտվիք, չչո՞ որ նրանք վեց ամիս է  
պահանջում են նրան:

ՀՄԵԱ. Իրոք, արքա, լավ կլիներ, եթե մե՛զ տայիիք նրան:

ՀԵՐՈՎԴ. Բավի է այդ մասին: Ես արդեն ձեզ տվել եմ իմ պատասխանը:  
Ես նրան ձեզ չեմ ուզում տալ: Դա մի մարդ է, որ տեսել է Աստծուն:

ՀՄԵԱ. Այդ, այդ անկարելի է: Եղիա մարդարեից հետո ոչ ոք Աստծուն  
չի տեսել: Եղիա մարդարեն վերջինն է եղել, որ տեսել է Աստծուն: Մեր  
ժամանակները Աստված մարդկանց չի երևում: Նա թաքում է պահում  
իրան: Եվ դրա համար է, որ երկիրը լի է անբախտություններով:

ՄԻ ԱՅԼ ՀՄԵԱ. Վերջապես հայտնի չէ՝ իրոք տեսե՞լ է եղիան Աստծուն,  
թե ոչ: Ավելի ճիշտ, նա Աստծո ստվերն է միայն տեսել:

ԵՐՐՈՐԴ ՀՄԵԱ. Աստված իրան երբեք չի թաքցնում: Նա իրան ցույց է  
տալիս միշտ և ամեն բանում: Աստված նույնպես և չարի մեջ է, ինչպես  
բարու մեջ:

ՉՈՐՐՈՐԴ ՀՄԵԱ. Այդպես չպետք է ասել: Դա շատ գտանգավոր միտք  
է: Դա մի միտք է, որ Ալեքսանդրիական դպրոցներից է եկել, որտեղ  
հունական փիլիսոփայություն են սովորեցնում: Իսկ հույները կուապաշտ  
են: Հույները մինչև իսկ թլպատված էլ չեն:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀՄԵԱ. Երբե՛ք չի կարելի իմանալ, թե ինչպես է վարվում  
Աստված: Խորհրդավոր է նրա ուղիները: Կարող է պատահել, որ այն, ինչ  
մենք չարիք ենք անվանում՝ բարիք է, իսկ այն, ինչ մենք բարիք ենք  
համարում՝ չարիք է: Ոչինչ չի կարելի իմանալ: Հարկավոր է լոկ  
հնագանդվել ամեն բանի: Աստված շատ է զորավոր: Նա միաժամանակ  
հարվածում է և՝ թույլերին, և՝ ուժեղներին: Նա ոչ ոքի առավելություն չի  
տալիս:

ԱՌԱՋԻՆ ՀՄԵԱ. Այդ ճիշտ է: Սարսափելի՛ է Աստված: Նա փշրում է և  
թույլերին, և ուժեղներին, ինչպես ցորենն են փշրում սանդի մեջ: Բայց այդ  
մարդը Աստծուն երբեք չի տեսել: Եղիա մարդարեից հետո ոչ ոք չի տեսել

## Աստծուն:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Լոեցը՝ք դրանց: Դրանք ինձ ձանձրացնում են:

ՀԵՐՈՎԴԻ. Բայց ես լսել եմ, որ Յոքանաան ինքն է Եղիա մարգարեն:

ՀՐԵԱ. Այդ անկարելի է: Եղիա մարգարեից հետո երեք հարյուր տարուց ավել է անցել:

ՀԵՐՈՎԴԻ. Կան այնպիսինները, որ ասում են, թե դա Եղիա մարգարեն է: ՆԱԶՈՎՐԵՑԻ. Ես համոզված եմ, որ դա Եղիա մարգարեն է:

ՀՐԵԱ. Ոչ, ո՛չ, դա Եղիա մարգարեն չէ:

ԹՈՔԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԸ. Հասել է օրը, հասել է Տիրոջ օրը, և ես լսում եմ նրա քայլերը լեռների վրա, նրա՝ ով աշխարհի Փրկիչը պիտի լինի:

ՀԵՐՈՎԴԻ. Դրանով ի՞նչ է ուզում ասել: Աշխարհի փրկի՞չ:

ՏԻԳԵԼԻՆ. Դա կեսարի տիտղոսներից մեկն է:

ՀԵՐՈՎԴԻ. Բայց կեսարը Հրեաստան չի գալու: Ես երեկ Հռոմից նամակ սուաց: Ինձ բան չէին գրել այդ մասին: Վերջապես դուք, Տիգելին, ձմեռը Հռոմ եք եղել, ոչինչ չե՞ք լսել այդ մասին:

ՏԻԳԵԼԻՆ. Ծշմարիտ որ, արքա, ես այդ մասին բան չեմ լսել: Ես միայն տիտղոսն էի բացատրում: Դա կեսարի տիտղոսներից մեկն է:

ՀԵՐՈՎԴԻ. Կեսարը չի կարող գալ, նա ոստացավ ունի: Ասում են, որ նրա ոտները փղի ոտների մնան են: Բացի այդ, կան նաև պետական նկատումներ: Ով հեռանում է Հռոմից՝ կորցնում է Հռոմը: Նա չի գա: Վերջապես կեսարը տեր է: Եթե կամենա՝ կարող է և գալ: Սակայն ես չեմ կարծում, որ նա գա:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ. Մարգարեի խոսքը կեսարի մասին չէր, արքա՛:

ՀԵՐՈՎԴԻ. Կեսարի մասին չէ՞ր:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ. Ոչ, արքա:

ՀԵՐՈՎԴԻ. Հապա ո՞ւմ մասին էր խոսում նա:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ. Մեսսիայի, որը եկել է:

ՀՐԵԱ. Մեսսիան չի եկել:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ. Նա եկել է և ամեն տեղ հրաշքներ է գործում:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Ո՛հ, ո՛հ, հրաշքներ: Ես հրաշքների չեմ հավատում: Ես այդ շատ եմ տեսել:

## Մանկավիկին՝

Իմ հովհարը:

ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎՐԵՑԻ. Այդ մարդն իսկական հրաշքներ է գործում: Այդպես, մի հարսանիքում, որ տեղի ուներ Գալիլիայի մի փոքրիկ քաղաքում, մի բավական նշանավոր քաղաքում, նա ջուրը գինի դարձեց: Այդ պատմել են ինձ մարդիկ, որ այնտեղ ներկա են եղել: Նմանապես, նա բժշկել է երկու բորոտների, որ նստած են եղել Կափառնաումի դարպասի

**առջև, բժշկել է միայն իր ձեռքը նրանց վրա դնելով:**

**ԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎԾԵՑԻ. ԱՇ, Կափառնառում նա երկու կույր է բժշկել:**

**ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Ոչ, բորոտ են եղել այդ երկուսը: Բայց նա կույրերի էլ է բժշկել: Նրան տեսել են մի սարի վրա, հրեշտակների հետ խոսելիս:**

**ՍԱԴՈՒԿԵՑԻ. Հրեշտակ չկա:**

**ՓԱՄԻՍԵՑԻ. Հրեշտակներ կան, բայց ես չեմ հավատում, որ այդ մարդը խոսած լինի նրանց հետ:**

**ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Անցորդների մի բազմություն տեսել է նրան հրեշտակների հետ խոսելիս:**

**ՍԱԴՈՒԿԵՑԻ. Ոչ հրեշտակների:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Ինձ նեղացնում են սրանք: Սրանք հիմար են: Բոլորովին հիմար են սրանք:**

### **Մանկավիկին՝**

**Դեհ, լավ, իմ հովհանքը: (Մանկավիկը տալիս է հովհարը): Դուք երազկոտ տեսք ունեք: Պետք չէ՝ երազել: Երազողները հիվանդներ են: (Հովհարով խփում է մանկավիկին):**

**ԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Նմանապես Յայրոսի դստեր հրաշքը:**

**ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Այո՛, այո՛, այդ կատարելապես հաստատ բան է: Այդ անկարելի՛ է ժխտել:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Այս մարդիկ խենթացել են: Լուսնին շատ են նայել սրանք: Ասացեք թող լրեն:**

**ՀԵՐՈՎԴ. Ի՞նչ բան է այդ Յայրոսի դստեր հրաշքը:**

**ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Յայրոսի դուստրը մեռել էր և նա հարություն տվեց նրան:**

**ՀԵՐՈՎԴ. Նա մեռելներին հարություն է տալիս:**

**ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Այո՛, արքա, նա մեռելներին հարություն է տալիս:**

**ՀԵՐՈՎԴ. Ես չեմ ուզում, որ նա այդ բանն անե: Ես այդ արգելում եմ նրան: Ես չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Պետք է գտնել այդ մարդուն և ասել, որ ես արգելում եմ մեռելներին հարություն տալը: Այժմ ո՞ւր է նա, այդ մարդը:**

**ԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Ամեն տեղ, արքա, բայց շատ դժվար է գտնել նրան:**

**ԱՌԱՋԻՆ ՆԱԶՈՎԾԵՑԻ. Ասում են, որ նա այժմ Սամարիա է:**

**ՀՐԵԱ. Ուրեմն նա մեսսիան չէ, եթե որ Սամարիա է: Սամարացիների մոտ չէ, որ պետի գա մեսսիան: Սամարացիները նգոված են: Նրանք երբեք տաճարներում զոհ չեն բերում Աստծուն:**

ԵՐԿՐՈՐԴ ՆԱԶՈՎԸԵՑԻ Սի քանի որ է, որ նա հեռացել է Սամարիայից: Կարծեմ այժմ նա երուսաղեմի շրջակայքում է:

ԱՌԱՃԻՆ ՆԱԶՈՎԸԵՑԻ. Աչ, ոչ, նա այնտեղ չէ: Ես երուսաղեմից նոր եմ եկել: Աչա երկու ամիս է նրա մասին բան չի լսվում:

ՀԵՐՈՎԴԻ. Դա միւնույն է: Այնուամենայնիվ պետք է գտնել նրան և իմ կողմից ասել, որ չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Ձուրը գինը դարձնել բժշկել բորոտներին, կույրերին.... Այդ ամենը նա կարող է անել, եթե կամենում է: Դրանց դեմ ասելիք չունեմ: Մինչև իսկ ինձ թվում է, որ բորոտներին բժշկելը բարի գործ է: Բայց ես չեմ թույլատրում մեռելներին հարություն տալու: Սարսափելի կլիներ, եթե մեռելները հարություն առնեին:

ՅՈՒԹԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԸ. Ահ, պագչոտ, պոռնիկ'կ կին: ԱՇ, Բաբելոնի դուստր՝ ոսկի աչքերով և ոսկեներկ թերթիչներով: Լսի՛ր, թե ի՞նչ է ասում Աստված, — արձակեցե՛ք նրա վրա մարդկային բազմությունը, թող ժողովուրդը քարեր առնե և քարկոծե նրան:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Լոեցրե՛ք դրան:

ՅՈՒԹԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԸ. Որ զորապետները նրան պատառ—պատառ անեն իրանց սրերով, որ ջախջախին իրանց վահաններով:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Այդ լրբություն է:

ՅՈՒԹԱՆԱԱՆ. Այդպես պիտի ջնջեմ ես անօրինությունը երկրի վրա, որպեսզի բոլոր կանայք սովորեն չհետեւել դրա գարշ գործերին:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Դուք լսո՞ւմ եք: Նա իմ դեմ է խոսում: Եվ դուք թույլ եք տալիս, որ վիրավորեն ձեր կնոջը:

ՀԵՐՈՎԴԻ. Բայց նա ձեր անունը չտվեց:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Դա ի՞նչ նշանակություն ունի: Դուք լավ գիտեք, որ նա ի՞նձ է ուզում վիրավորել: Եվ ես ձեր ամուսինն եմ, այնպես չէ՞:

ՀԵՐՈՎԴԻ. Այո՛, սիրելի և պատվարժան Հերովդիադա, դուք իմ ամուսինն եք, իսկ առաջ իմ եղբոր ամուսինն եք եղել:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Այն գո՞ւք էիք, որ խլեցիք ինձ նրա գրկից:

ՀԵՐՈՎԴԻ. Երավ որ, ես ավելի ուժեղ էի, քան նա... Բայց չխոսենք այդ մասին: Ես դրա մասին չեմ ուզում խոսել: Դրա պատճառով էր, որ մարդարեն ասաց այն սարսափելի խոսքերը: Դրա պատճառով գուցե դժբախտություն պատահի: Զխոսենք դրա մասին: Ազնիվ Հերովդիադա, մենք մոռանում ենք մեր հյուրերին: Ինձ համար գինի լցըռու, սիրելիս: Գինի լցըռեք արծաթյա մեծ գավաթներն ու ապակյա մեծ գավաթները: Ես կեսարի կենացն եմ ուզում խմել: Այստեղ հոռմայեցիններ կան, պետք է խմել կեսարի կենացը:

ԱՄԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ. Կեսա՛ր, կեսա՛ր:

ՀԵՐՈՎԴԻ. Մի՞թե դուք չեք նկատում որքան գունատ է ձեր դուստրը: ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Զեզ ի՞նչ՝ գունատ է նա, թե ոչ:

ՀԵՐՈՎԴԻ. Ես երբեք նրան այդքան գունատ չեմ տեսել:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Չպետք է նայել նրան:

ՑՈՔԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԸ. Այն օրն արեգակը սև կլինի, որպես ստեփ վերաբեռն և լուսինը կլինի կարմիր, որպես արյուն և երկնքի աստղերը գետին կթափվեն, որպես թզենու կանաչ պտուղներն են թափվում թզենուց, և երկրային թագավորները կուպական:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. ԱՇ, աՇ, ես շատ կուզենայի տեսնել այն օրը, երբ, ինչպես դա է ասում լուսինը կդառնա կարմիր, որպես արյուն և երբ աստղերը գետին կթափվեն թզենու կանաչ պտուղների նման: Հարբած մարդու նման է խոսում այդ մարգարեն: Ինձ համար անտանելի է նրա ձայնի հնչյունը: Ես ատում եմ նրա ձայնը: Հրամայեցե՛ք, որ լրե:

ՀԵՐՈՎԴԻ. Ոչ: Ես չեմ հասկանում ինչ է ասում նա, բայց այդ կարող է մարդարեռություն լինել:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Ես մարդարեռությունների չեմ հավատում: Նա գինովցած մարդու նման է խոսում:

ՀԵՐՈՎԴԻ. Գուցե նա Աստծո գինով է գինովցել:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Դա՛ ի՞նչ գինի է՝ Աստծո գինին: Որպիսի՞ խաղողից է: Ո՞ր հնանում կարելի է գտնել այդ գինին:

ՀԵՐՈՎԴԻ (որ չի դադարում Սալոմեին նայելուց). Տիգելին, կեսարը հետդ չխոսե՞ց, երբ դու վերջին անգամ Հռոմ էիր:

ՏԻԳԵԼԻՆ. Ինչի՞ մասին:

ՀԵՐՈՎԴԻ. Ինչի մասի՞ն: ԱՇ, ես ձեզնից բա՞ն հարցրի, այնպես չէ՞: Մոռացա, թե ինչ էի ուզում իմանալ ձեզնից:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Դուք դարձյալ իմ գետերն եք նայում: Նրան չպետք է նայել: Ես արդեն ձեզ ասել եմ այդ :

ՀԵՐՈՎԴԻ. Դուք դրանից բացի ուրիշ բան չեք ասում:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Ես այդ կրկնո՞ւմ եմ:

ՀԵՐՈՎԴԻ. Խսկ տաճարի վերականգնումը, որի մասին այնքա՞ն խոսվել է: Արդյոք մտադի՞ր են մի բան անելու: Ասում են, որ սրբարանի վարագույրն անհայտացել է, այնպես չէ՞:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Դու ինքդ ես վերցրել այն: Դու անիմաստ բաներ ես ասում: Ես չեմ ուզում այստեղ մնալ: Վերադառնա՞ք:

ՀԵՐՈՎԴԻ. Սալոմե, պարեցեք ինձ համար:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Ես չեմ ուզում, որ նա պարե:

ՍԱԼՈՄԵ. Ես պարել չեմ ուզում, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴԻ. Սալոմե, դո՞ւստը Հերովդիադայի, պարեցե՛ք ինձ համար:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Հանգիստ թողեք նրան:

ՀԵՐՈՎԴԻ. Ես ձեզ հրամայում եմ, որ պարեք, Սալոմե:

ՍԱԼՈՄԵ. Ես չեմ պարի, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. /Ժիծաղելով/. Տեսնո՞ւմ եք, ինչպես հնագանդ է նա:

ՀԵՐՈՎԴԻ. ինձ ի՞նչ՝ կպարե նա, թե ոչ: ինձ համար միւնույն է: Ես երջանիկ եմ այս երեկո: Ես երբեք այսպես երջանիկ չեմ եղել:

ԱԲԱՁԻՆ ԶԻՆՎՈՐ. Մուայլ տեսք ունի նա, տետրարդը: Նա մուայլ տեսք ունի, այնպես չէ:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Նա մուայլ տեսք ունի:

ՀԵՐՈՎԴԻ. Եվ ինչո՞ւ պետի երջանիկ չլինեմ: Կեսարը, որ աշխարհի տերն է, որ ամեն ինչի տերն է՝ սիրում է ինձ: Եվ ահա նա ինձ թանկագին ընծաներ է ուղարկել: Նա խոստացել է Հռոմ կանչել Կապադովկիայի թագավորին, որ իմ թշնամին է: Հռոմում գուցեց նրան խաչեն: Ինչ որ ուզենա կարող է անել նա, կեսարը: Նա տեր է: Ուրեմն տեսնում եք, որ ես ունեմ իրավունք երջանիկ լինելու: Զկա աշխարհում ոչինչ, որ կարողանար իմ ուրախությունը խանգարել:

ՑՈՔԱՆԱԱՆԻ ԶԱՅՆԸ. Նա բազմած պիտի լինի իր գահին: Ծիրանի և բոսրակ պիտի լինի նրա հագին: Եվ նրա ձեռքին մի ոսկի անոթ, լի իր հայոյություններով: Եվ Տիրոջ հրեշտակը պիտի հարվածե նրան: Որդերի կերակուր պիտի լինի նա:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Լսո՞ւմ եք, ինչ է ասում նա ձեր մասին: Ասում է, որ դուք որդերի կերակուր պիտի լինեք:

ՀԵՐՈՎԴԻ. Նա իմ մասին չի խոսում: Նա իմ դեմ երբեք չի խոսում: Նա խոսում է կապադովկիացի թագավորի մասին: Կապադովկիացի թագավորի, որն իմ թշնամին է: Այդ նա՛ է, որ որդերի կերակուր պիտի դառնա: Իմ մասին չէ այդ: Նա, այդ մարդարեն, իմ դեմ ոչինչ չի ասում, բացի նրանից, որ ես անարդար վարգեցի՝ կոռության առնելով իմ եղբոր կնոջը: Գուցե իրավացի է նա՛ չէ՞ որ դուք անպտուղ եք:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Ե՞ս եմ անպտուղ, ե՞ս: Եվ այդ ասողը դո՛ւք եք, դո՛ւք, որ շարունակ իմ զատերն եք նայում, դուք, որ ուզում եք նրան պարել տալ ձեր հաճույքի համար: Միծաղելի են ձեր խոսքերը: Ես զավակ ունեցել եմ: Դուք եք, որ երբեք զավակ չեք ունեցել, նույնիսկ ձեր հարճերից որևէ մեկից: Այդ դո՛ւք եք անպտուղ, ո՛չ թե ես:

ՀԵՐՈՎԴԻ. Լոեցե՛ք: Ես ձեզ ասում եմ, որ դուք անպտուղ եք: Դուք ինձ մի զավակ չտվիք և մարդարեն ասում է, որ մեր ամուսնությունը ճշմարիտ ամուսնություն չէ: Նա ասում է, որ դա ազգապիղդ ամուսնություն է, մի ամուսնություն, որ դժբախտություն պիտի քերե: Վախենամ թե նա իրավացի է: Ես հավատացած եմ, որ նա իրավացի է: Սակայն այժմ այդ բաների վրա խոսելու ժամանակը չէ: Այժմ ես ուզում եմ երջանիկ լինել: Եվ իրո՞ք ես երջանիկ եմ: Ոչ մի բան պակաս չէ:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱՆԱ. Ես շատ գոհ եմ, որ դուք այս երեկո այդպես լավ եք տրամադրված: Դա արտասովոր բան է: Բայց ուշ է արդեն: Վերադառնանք: Մի մոռանաք, որ արևը ծագելուն պես մենք բոլորս որսի պիտի գնանք: Կեսարի դեսպաններին ամեն կերպ պետք է պատփել, այնպես չէ՞:

ԵՐԿՐՈՐԴ ԶԻՆՎՈՐ. Որքան մուայլ տեսք ունի նա, տետրարքը:

ԱՌԱՋԻՆ ԶԻՆՎՈՐ. Այո՛, նա մուայլ տեսք ունի:

ՀԵՐՈՎԴ. Սալոմե՛, պարեցե՛ք ինձ համար: Ես ձեզ աղաչում եմ, որ պարեք ինձ համար: Տիսուր եմ ես այս երեկո: Այո՛, ես շատ եմ տիսուր այս երեկո: Երբ ես այստեղ եկա, արյան մեջ սայթափեցի՝ դա վատ նշան է, և ես լսեցի, ես հավատացած եմ, որ լսեցի օդում ինչ—որ թևերի թափահարում, ինչ—որ հսկայական թևերի թափահարում: Զգիտեմ այդ ի՞նչ է նշանակում: Ես տիսուր եմ այս երեկո: Ուրեմն, պարեցե՛ք ինձ համար, Սալոմե՛, աղաչում եմ ձեզ: Եթե դուք ինձ համար պարե՛ք, կարող եք պահանջել ինձնից ինչ և կամենաք, և ես կտամ ձեզ: Այո, պարեցե՛ք ինձ համար, Սալոմե՛, և ես կտամ ձեզ ինչ և պահանջեք, թեկուզ իմ թագավորության կեսը:

ՍԱԼՈՄԵ /վեր կենալով/. Դուք կտաք ինձ ամենը, տետրա՛րք, ինչ էլ որ պահանջե՞մ:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Մի՛ պարեք, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ. Ամեն ինչ, թեկուզ այդ իմ թագավորության կեսը լինի:

ՍԱԼՈՄԵ. Դուք երդվո՞ւմ եք, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴ. Ես երդվում եմ, Սալոմե:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Դուստր իմ, մի՛ պարեք:

ՍԱԼՈՄԵ. Ինչո՞վ եք երդվում դուք, տետրա՛րք:

ՀԵՐՈՎԴ. Իմ կյանքով, իմ թագով, իմ աստվածներով: Ինչ էլ որ կամենաք դուք՝ ես կտամ ձեզ, եթե պարեք ինձ համար, թեկուզ իմ թագավորության կեսը պահանջեք: Օ՛, Սալոմե՛, Սալոմե՛, պարեցե՛ք ինձ համար:

ՍԱԼՈՄԵ. Դուք երդվեցի՛ք, տետրարք:

ՀԵՐՈՎԴ. Ես երդվեցի, Սալոմե:

ՍԱԼՈՄԵ. Ինչ էլ որ պահանջեմ ձեզնից, թեկուզ ձեր թագավորության կե՞սը լինի դա:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Մի՛ պարեք, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ. Անգամ եթե իմ թագավորության կեսը լինի դա: Դու չքնաղագեղ թագուհի կլինես, Սալոմե, եթե կամենաս պահանջել իմ թագավորթյան կեսը: Նա շատ չքնաղ թագուհի կլինի, այնպես չէ՞: Ա՛հ, ցուրտ է այստեղ: Այստեղ մի ցուրտ քամի է փչում, և ես լսում եմ... Ինչո՞ւ եմ լսում այդ թևերի թափահարումը: Օ՛հ, կարելի է կարծել, թե դա մի թռչուն է, մի ահագին սև թռչուն է, որ սավառնում է պատշգամբի վրա: Բայց ինչո՞ւ չեմ կարողանում տեսնել նրան: Եվ սարսափելի է նրա թևերի թափահարումը: Սարսափելի է նրա թևերի թափահարումից առաջացած քամին: Դա ցուրտ քամի է: Բայց ոչ, բոլորովին ցուրտ չէ: Ընդհակառակը, սաստիկ տաք է: Ես խեղդվում եմ: Ձուր լցրեք իմ ձեռներին: Ձյուն տվեք՝ ուտեմ: Բացե՛ք վերարկուիս կոճակները: Ո՛չ: Թողե՛ք այդ: Այդ իմ պսակն

է, որ ցավ է պատճառում ինձ: Իմ վարդյա պսակը: Կարծես կրակից են այդ ծաղկիները: Նրանք այրեցին իմ ճակատը: /Նա պոկում է գլխից ու սեղանի վրա է գցում իր պսակը/: ԱՇ, վերջապես ես չնչում եմ: Որքան կարմի՛ր են այս թերթերը: Կարծես արյան բժեր են սփոռոցի վրա: Այդ ոչինչ: Զի կարելի որևէ նշան որոնել ամեն մի տեսածդ բանում: Այդպիսով անհնար է դառնում կյանքը: Ավելի լավ է ասել, որ արյան բժերը նույնքան գեղեցիկ են, որքան և վարդի թերթերը: Ավելի լավ կլիներ այդպես ասել: Սակայն չխոսենք այդ մասին: Այժմ ես երջանիկ եմ: Ես շատ եմ երջանիկ: Եվ ունեմ իրավունք երջանիկ լինելու, այնպես չէ՞: Զեր դուստրը կպարե ինձ համար: Դուք պիտի պարեք ինձ համար, այնպես չէ՞: Սալոմե: Դուք խոստացաք պարել ինձ համար:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Ես չեմ ուզում, որ նա պարե:

ՍԱԼՈՄԵ. Ես կպարեմ ձեզ համար, տեսրա՛ք:

ՀԵՐՈՎԴ. Լսո՞ւմ եք, ինչ է խոսում ձեր դուստրը: Նա կպարե ինձ համար: Լավ է այդ, Սալոմե, որ պարելու եք դուք ինձ համար: Եվ երբ կվերջանա ձեր պարը, մի՛ մոռանաք պահանջնելու ինձնից ինչ էլ որ կամենաք, թեկուզ դա իմ թագավորության կեսը լինի: Ես երդվել եմ, այնպես չէ՞:

ՍԱԼՈՄԵ. Դուք երդվել եք, տեսրա՛ք:

ՀԵՐՈՎԴ. Եվ ես երբեք չեմ դրժի իմ խոսքը: Ես նրանցից չեմ, որ իրանց խոսքը դրժում են: Ես ստել չգիտեմ: Ես իմ խոսքի գերին եմ և իմ խոսքը թագավորի խոսք է: Կապադովկիայի թագավորը միշտ ստում է, բայց չէ՞ որ նա իսկական թագավոր էլ չէ: Նա երկշոտի մեկն է: Բացի այդ, նա ինձ փող է պարտ և չի ուզում տալ: Նա մինչև իսկ վիրավորանք է հասցել իմ դեսպաններին: Նա շատ վիրավորական բաներ է ասել: Սակայն, երբ Հռոմ գնա, կեսարը նրան պիտի խաչ հանե: Ես հավատացած եմ, որ Կեսարը նրան կխաչե: Իսկ եթե ոչ, միկանույն է, նա որդերի կերակուր պիտի լինի, պիտի մեռնի: Այդպես գուշակեց մարգարեն: Դեհ, Սալոմե, ինչի՞ եք սպասում:

ՍԱԼՈՄԵ. Սպասում եմ, որ ստրկուհիներն ինձ համար անուշահոտ օծանելիքներ և յոթը ծածկույթ բերեն ու հանեն իմ սանդալները:

**Սարկուհիները բերում են անուշահոտ օծանելիքներ, յոթը  
ծածկույթ և հանում են Սալոմեի սանդալները**

ՀԵՐՈՎԴ. ԱՇ, դուք մերկ ոտներով պիտի պարեք: Այդ լավ է, շատ լավ՝ չ այդ: Զեր փոքրիկ ոտները նման կլինեն սպիտակ աղավնյակների: Նրանք նման են մանրիկ, սպիտակ ծաղիկների, որ պարում են ծառի վրա... ԱՇ, ո՛չ: Նա արյան մեջ պիտի պարե: Գետնի վրա արյուն է: Ես չեմ ուզում, որ նա արյան մեջ պարե: Դա շատ վատ նշան կլինի:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Զեզ ի՞նչ, թե նա արյան մեջ կպարե: Չէ՞ որ դուք

գնում էիք արյան միջով, դուք...

ՀԵՐՈՎԴԻ. Ինձ ի՞նչ: ԱՇ, նայեցեք լուսնին: Նա կարմիր դարձավ: Նա դարձավ կարմիր՝ որպես արյուն: Այդ լավ գուշակեց մարգարեն: Նա գուշակեց, որ լուսինը կդառնա կարմիր՝ որպես արյուն: Այդպես ասաց նա, այնպես չէ՞: Դուք բուրդ այդ լսեցիք: Լուսինը դարձավ կարմիր՝ որպես արյուն: Դուք այդ չե՞ք տեսնում:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Ես այդ լավ եմ տեսնում: Եվ աստղերը ցած են թափվում, որպես թզենու կանաչ պտուղներ, այնպես չէ՞: Եվ արեւ դառնում է սև, որպես ստեփ վերարկու, և երկրի թագավորները սոսկում են: Ահա այդ գուցե և երևում է: Գոնե մի անգամ իր կյանքի ընթացքում մարգարեն իրավացի դուրս եկավ – երկրի թագավորները սոսկում են: Սակայն վերադառնա՞նք: Դուք տկար եք: Հռոմում կկարծեն, թե դուք խելագարվել եք: Վերադառնա՞նք, ասում եմ ձեզ:

ՅՈՒԹԱՆԱՆԻ ԶԱՅՆԸ. ՄԿ է նա, որ գալիս է էղոմից, որ գալիս է Բոսրայից իր ծիրանի հագուստով, որը շոշշողում է իր հագուստի գեղեցկությամբ և որ քայլում է ամենակարող զորությամբ: Ինչո՞ւ նրա հագուստը բոսրաներկ է:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Վերադառնա՞նք: Այդ մարդու ձայնը զայրույթով է լցնում իմ սիրաց: Ես չեմ ուզում, որ իմ դուստրը պարե, քանի որ այդ մարդն աղաղակում է այնտեղ: Ես չեմ ուզում, որ իմ դուստրը պարե, քանի որ դուք այդպե՞ս եք նայում նրան: Վերջապես ես չեմ ուզում, որ նա պարե:

ՀԵՐՈՎԴԻ. Վեր մի՛ ելնի, իմ կին, իմ թագուհի, անօգուտ է այդ: Մինչև որ նա չպարե, ես չեմ վերադառնա: Պարեցե՛ք, Սալոմե, պարեցե՛ք ինձ համար:

ՀԵՐՈՎԴԻԱՆԱ. Մի՛ պարեք. դուստր իմ:

ՍԱԼՈՄԵ. Ես պատրաստ եմ, տեսրա՛ք:

### Սալոմեն պարում է յաթը ծածկույթի պարը

ՀԵՐՈՎԴԻ. ԱՇ, սքանչելի՛ է, սքանչելի՛ է այդ: Տեսնո՞ւմ եք, նա պարեց ինձ համար, ձեր դուստրը: Մոտեցե՛ք, Սալոմե, մոտեցե՛ք, որպեսզի ես կարողանամ վարձատրել ձեզ: ԱՇ, պարուհիներին ես լավ եմ վարձատրում: Ես քեզ լավ պիտի վարձատրեմ: Ինչ էլ որ կամենաս՝ պիտի տամ քեզ: Ասա՛, ի՞նչ ես ուզում, Սալոմե՛:

ՍԱԼՈՄԵ (ծունկ չոքելով). Ես ուզում եմ, որ այժմ իսկ բերեն ինձ, արծաթյա ափսեի վրա...

ՀԵՐՈՎԴԻ (ծիծաղելով). Արծաթյա ափսեի վրա՞... Այո՛, իհարկե արծաթյա ափսեի վրա... Որքան նազելի՛ է սա, նայեցեք, այնպես չէ՞: Ի՞նչ եք ուզում, որ բերեն ձեզ համար արծաթյա ափսեի վրա, իմ սիրելի, իմ գեղանի Սալոմե, դուք, որ Հրեաստանի կույսերի մեջ ամենից չքնագեղն եք:

Ի՞նչ եք ուզում, որ բերեն ձեզ արծաթյա ափսեի վրա: Ասացեք ինձ: Ինչ էլ որ լինի պիտի տամ ձեզ: Իմ գանձերը ձեզ են պատկանում: Ուրեմն ի՞նչն է այդ, Սալոմե:

**ՍԱԼՈՄԵ** (վեր կենալով). Յոքանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Ահ, այդ լավ ասացիր, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ. Ռ'չ, ո՞չ:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Այդ լավ է ասված, դուստր իմ:

ՀԵՐՈՎԴ. Ռ'չ, ո՞չ: Սալոմե', դուք այդ չեք պահանջում ինձնից: Զեր մորը մի' լսեք: Նա միշտ վատ խորհուրդներ է տալիս ձեզ: Նրան չպետք է լսել:

**ՍԱԼՈՄԵ**. Ես իմ մո՛ըը չեմ լսում: Դա իմ սեփական հաճույքի համար է, որ պահանջում եմ ես Յոքանաանի գլուխը արծաթյա ափսեի վրա դրած: Դուք երդվել եք, Հերովդ: Մի՛ մոռանաք, որ դուք երդվել եք:

ՀԵՐՈՎԴ. Ես գիտեմ այդ: Ես երդվեցի իմ աստվածներով: Ես այդ լավ գիտեմ, սակայն աղաչում եմ ձեզ, Սալոմե', մի այլ բան պահանջեցեք ինձնից: Պահանջեցեք իմ թափակորության կիսը և ես կտամ ձեզ: Բայց մի պահանջեք այն, ինչ պահանջեցիք դուք:

**ՍԱԼՈՄԵ**. Ես ձեզնից Յոքանաանի գլուխն եմ պահանջում:

ՀԵՐՈՎԴ. Ռ'չ, ո՞չ եմ ուզում:

**ՍԱԼՈՄԵ**. Դուք երդվել եք, Հերովդ:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Այո՛, դուք երդվել եք: Բոլորը լսեցին ձեզ: Դուք երդվեցիք բոլորի առաջ:

ՀԵՐՈՎԴ. Դուք լրացե՛ք, ես ձեզ հետ չեմ խոսում:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Իմ դուստր իրավացի է, երբ այդ մարդու գլուխն է պահանջում: Այդ մարդը լուտանք է թափում իմ վրա: Նա հրեշավոր բաներ է ասում իմ մասին: Երկում է, որ իմ դուստրը սիրում է իր մորը: Մի՛ զիջեք, դուստր իմ: Նա երդվել է, երդվել է նա:

ՀԵՐՈՎԴ. Լոեցե՛ք, հետո մի՛ խոսեք: Սալոմե', խոհեմ պետք է լինել, այնպես չչ: Այնպես չչ, պետք է լինել խոհեմ: Ես ձեր վերաբերմամբ երբեք խիստ չեմ եղել: Ես ձեզ միշտ սիրել եմ: Գուցե և չափից դուրս եմ սիրել ձեզ: Ուրեմն այդ մի պահանջեք: Սարսափելի է, զարհուրելի է ինձնից այդ պահանջել... Եվ իրոք, ես չեմ հավատում, որ դուք լուրջ եք պահանջում այդ: Գիխատված մարդու մի գլուխ – մի՞թե այլանդակ բան չչ՞զա: Աղջիկն այդպիսի բանի չպիտի նայե: Եվ ի՞նչ հաճույք պիտի ստանաք դրանից: Ոչինչ: Ռ'չ, ո՞չ, դուք այդ չեք ուզում: Մի ակնթարթ լսեցեք ինձ: Ես մի զմրուխտ ունեմ – մի մեծ ու կոր զմրուխտ, որն ինձ կեսարի սիրելին է ուղարկել: Եթե դուք նայեք այդ զմրուխտին – կտեսնեք այն, ինչ կատարվում է անսահման տարածության վրա: Ինքը՝ կեսարը, երբ ցիրկ է գնում, հետը մի այդպիսի զմրուխտ վերցնում: Բայց իմն ավելի մեծ է: Աշխարհիս ամենախոշոր զմրուխտն է դա: Դուք այդ եք ուզում, այնպես

**ՀՀ:** Պահանջեցիք, և ես կտամ ձեզ այն:

**ՍԱԼՈՒՄԵ.** Ես Թոքանաանի գլուխն եմ պահանջում:

**ՀԵՐՈՎԴԻ. Դուք ինձ չեք լսում, դուք չեք լսում ինձ: Թույլ ավեք խռում, Ապրում:**

**ՍԱԼՈՒՄԵ. Ցոքանաանի գլուխը:**

**ՀԵՐՈՎԴԻ. Ոչ, դուք այդ չեք ուզում: Դուք այդ լոկ ինձ աանջելու համար եք առում: Լոկ այն պատճառով, որ մի ամբողջ երեկո ձեզ էի նայում ես: Այս՝ այդպիս է: Ես ամբողջ երեկո ձեզ էի նայում: Զեր գեղեցկությունը շփոթեցրեց ինձ: Զեր գեղեցկությունը սարսափելի կերպով շփոթեցրեց ինձ, և ես չափեց գուրս զատ նայեցի ձեզ: Բայց ես այլիս այդպիս չեմ անի: Զպեաք է նայել ո՛չ առարկաներին, ո՛չ մարդկանց: Միայն Հայելիներին պետք է նայել: Որովհետև Հայելիները լոկ դիմակներ են ցույց տալիս մեզ: Օ՛հ, օ՛, դիմի՛: Ես ծարավ եմ: Սալումե՛, Սալումե՛, բարեկա՞մ լինենք: Վերջապես տեսնք... ի՞նչ էի ուզում ասել ես: Այն ի՞նչ էր: Ա՛հ, մտաբերեցի: Սալումե՛, մոտ եկեք: Վախենամ ինձ չըսեք: Սալումե՛, դուք գիտեք իմ սպիտակ սիրամարդներին, իմ սիրո՞ւմ, սպիտակ սիրամարդներին, որ պրանում են այգում մրտենիների և նոճիների մեջ: Նրանց կտուցները ոսկեզօծ են և այն հատիկները, որ նրանք են կացահարում – նույնպիս սկեզօծ են: Եվ այդ սիրամարդների ուսնելով ներկված են, ժիրանադր՝ լին: Երբ նրանք կանչում են՝ անձրև է գալիս, իսկ երբ սկսում են պարել իրանց սիրամարդի պարը՝ երկնքում լուսնյակն է երկում: Նրանք զույգ—զույգ են ման գալիս նոճիների ու սե մրտենիների մեջ և նրանցից ամեն մեկին խնամում է մի առանձին ստրուկ: Երբեմն նրանք թաշում են ծառերի մեջ, երբեմն Հանգատանում մարդագետնի վրա և լճակի շուրջը: Աշխարհիս երեսին գրանցեց սքանչելի թաշուն չկա... Աշխարհում չկա ոչ մի թագավոր, որ այլպիսի սքանչելի թաշուններ ունենա: Ես հայտապահ եմ, որ կեսարն անդամ չունի այդպիսի զմայելի թաշուններ: Եվ ես կտամ ձեզ հիսուն սիրամարդք: Նրանք ամենուրեք կուղեկցնեն ձեզ և նրանց միջև դուք մի ահագին, սպիտակ ամփակ շրջապատված լուսեյակի կինեք նման: Ես ձեզ կտամ բոլորը: Միայն Հարյուր Հատ ունեմ ես և աշխարհում չկա ոչ մի թագավոր, որն իմ սիրամարդների նման սիրամարդ ունենա, բայց ես ձեզ կնվիրեմ բոլորը: Միայն թե պետք է ազատեք ինձ իմ խռուումից և չպահանջեք այն, ինչ պահանջեցիք:**

### Նո գոտարկում է պիեռ բաժակը

**ՍԱԼՈՒՄԵ. Տվե՛ք ինձ Ցոքանաանի գլուխը:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԻԱ. Այդ լավ է տաված, դումտք իմ: Դուք ծիծաղելի եք ձեր սիրամարդներով:**

**ՀԵՐՈՎԴԻ. Լոեցե՛ք: Դուք շարունակ աղաղակում եք: Դուք աղաղակում**

**ՀՀ՝ Պահանջեցեք, և ես կտամ ձեզ այն:**

**ՍԱԼՈՄԵ. Ես Ցոքանաանի գլուխն եմ պահանջում:**

**ՀԵՐՈՎԴԻ. Դուք ինձ չեք լսում, դուք չեք լսում ինձ: Թույլ տվեք խոսեմ, Սալոմե:**

**ՍԱԼՈՄԵ. Ցոքանաանի գլուխը:**

**ՀԵՐՈՎԴԻ. ՈՇ, դուք այդ չեք ուզում: Դուք այդ լոկ ինձ տանջելու համար եք ասում: Լոկ այն պատճառով, որ մի ամբողջ երեկո ձեզ էի նայում ես: Այո՛, այդպես է: Ես ամբողջ երեկո ձեզ էի նայում: Զեր գեղեցկությունը շփոթեցրեց ինձ: Զեր գեղեցկությունը սարսափելի կերպով շփոթեցրեց ինձ, և ես չափից դուրս շատ նայեցի ձեզ: Բայց ես այլևս այդպես չեմ անի: Զպետք է նայել ո՛չ առարկաներին, ո՛չ մարդկանց: Միայն հայելիներին պետք է նայել: Որովհետև հայելիները լոկ դիմակներ են ցույց տալիս մեզ: Օ՛հ, օ՛, գինի՛: Ես ծարավ եմ: Սալոմե՛, Սալոմե՛, բարեկա՛մ լինենք: Վերջապես տեսե՞ք... Ի՞նչ էի ուզում ասել ես: Այն ի՞նչ էր: Ա՛հ, մտաքերցի: Սալոմե՛, մոտ եկեք: Վախենամ ինձ չլսեք: Սալոմե՛, դուք գիտեք իմ սպիտակ սիրամարդներին, իմ սիրո՛ւմ, սպիտակ սիրամարդներին, որ զրունում են այգում մրտենիների և նոճիների մեջ: Նրանց կտուցները ոսկեզօծ են և այն հատիկները, որ նրանք են կտցահարում – նույնպես ոսկեզօծ են: Եվ այդ սիրամարդների ոտները ներկված են, ծիրանագո՞ւյն: Երբ նրանք կանչում են՝ անձրև է գալիս, իսկ երբ սկսում են պարել իրանց սիրամարդի պարը՝ երկնքում լուսնյակն է երևում: Նրանք զույգ–զույգ են ման գալիս նոճիների ու սև մրտենիների մեջ և նրանցից ամեն մեկին խնամում է մի առանձին ստրուկ: Երբեմն նրանք թռչում են ծառերի մեջ, երբեմն հանգաստանում մարգագետնի վրա և լճակի շուրջը: Աշխարհիս երեսին դրանից սքանչելի թռչում չկա... Աշխարհում չկա ոչ մի թագավոր, որ այդպիսի սքանչելի թռչուններ ունենա: Ես հավատացած եմ, որ կեսարն անգամ չունի այդպիսի զմայելի թռչուններ: Եվ ես կտամ ձեզ հիսուն սիրամարդգ: Նրանք ամենուրեք կուղեցեն ձեզ և նրանց միջև դուք մի ահազին, սպիտակ ամպով շրջապատված լուսնյակի կլինեք նման: Ես ձեզ կտամ բոլորը: Միայն հարյուր հատ ունեմ ես և աշխարհում չկա ոչ մի թագավոր, որն իմ սիրամարդների նման սիրամարդ ունենա, բայց ես ձեզ կնվիրեմ բոլորը: Միայն թե պետք է ազատեք ինձ իմ խոստումից և չպահանջեք այն, ինչ պահանջեցիք:**

### Նա գտարկում է գիեռ բաժակը

**ՍԱԼՈՄԵ. Տվե՛ք ինձ Ցոքանաանի գլուխը:**

**ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Այդ լավ է ասված, դումտր իմ: Դուք ծիծաղելի եք ձեր սիրամարդներով:**

**ՀԵՐՈՎԴԻ. Լոեցե՛ք: Դուք շարունակ աղաղակում եք: Դուք աղաղակում**

եք, որպես արյունաբրու մի գաղան: Զպետք է այլպես աղաղակել: Զեր ձայնը զրգուում է ինձ: Լսեցե՛ք, ասում եմ ձեզ: Սալոմե՛, մտածեցեք, թե ինչ եք անում: Գուցի Աստծուց է ուղարկված այդ մարդը: Ես հավատացած եմ, որ նա Աստծուց է ուղարկված: Նա սուրբ մարդ է: Աստծո աջն է դրակել նրան: Այդ խոսքերն Աստված է դրել նա քերանը: Պալատում, ինչպես և անապատում, Աստված միշտ նրա հետ է: Համենայն զեզս դա հնարավոր է: Ոչ ոք չգիտե, բայց գուցե Աստված նրա կողմն է և նրա հետ: Եվ եթե նա մեռնի, գուցե դժբախտություն պատահի: Վերջապես նա ասաց, որ այն օրը, երբ նա մեռնի, մեկին դժբախտություն պիտի պատահի: Այդ միայն ինձ կարող է պատահել: Հիշո՞ւմ եք, երբ ես այստեղ եկա՞ սայթաքեցի արյան մեջ: Բացի դրանից, ես լսեցի թերերի թափահարում: Դրանք շատ վատ նշաններ են: Ուրիշ նշաններ էլ կային: Ես հավատացած եմ, որ կային և այլ նշաններ, թեև ես չնկատեցի նրանց: Ուրեմն, Սալոմե՛, չէ՞ որ գուք չեք կամենում, որ ինձ դժբախտություն պատահի: Դուք այդ չեք կամենում: Վերջապես լսեցե՛ք ինձ:

### ՍԱԼՈՄԵ. Ցվե՞ք ինձ Յոքանանի դիլուխը:

ՀԵՐՈՎԴ. Տեսնո՞ւմ եք, դուք ինձ չեք լսում: Բայց հանգիստ եղեք: Ես բոլորովին հանգիստ եմ: Ես շատ հանգիստ եմ: Լսեցե՛ք, ես թաքում պահած զարդեր ունեմ, որ ձեր մայրն իսկ չի տեսել, բոլորովին պրատասովոր զարդարանքներ: Ես ունեմ մարդարայա մի մանյակ, որ չորս շարք մարդարայից է հյուսված: Կարծես լուսնյակներ լինեն արծաթյա ճառագայթների վրա շարպած: Կարծես ոսկեղին մի ցանցով բռնված հիսում լրանյակ լինի: Մի թագուշի կրել է այդ իր փղոսկրյա լանջին: Դու էլ թագուշու նման գեղանի կյիննս, եթե կրես այն: Ես ունեմ երկու տեսակ մեղեսիկներ: Մեկը սկ է, որպես գինի, մյուսը կարմիր, որպես ջրախառն գինի: Ես տոպազներ ունեմ, որ զեղին են, որպես վագրի աչքերը և տոպազներ, որ վարդագույն են, որպես աղավենների աչքերը և տոպազներ, որ կանաչ են, որպես կատունների աչքերը: Ես ոպազներ ունեմ, որոնք միշտ փայում են բոցով և ոպազներ, որոնք սիրու են տիբեցնում և վախենում են մութից: Ես ունեմ եղնջնաքարեր, որ մեռած կնոջ բիբերի են նման, ես ունեմ լուսնաքարեր, որոնք փոխվում են, երբ լուսնյակն է փոխվում և գունատվում են, երբ արե են տեսնում: Ես ունեմ շափյուղներ, որ ձիք չափ խոշոր են և կապույտ են որպես կապույտ ծաղիկները: Նրանց մեջ ծովն է տատանվում և լուսինը ընապ չի պղառուում նրա ալիքների կապույտը: Ես ունեմ ոսկեքարեր և և կապույտ զմրութաներ, ես ունեմ ոսկեպարաններ ու սուտակներ, ես ունեմ սարդիկոններ և հակինթներ և քաղքեղոնի քարեր և ես ձեզ կտամ այդ բոլորը, այ՞, բոլորը և կավելացնեմ դրան այլ բաներ եմ: Հնդկաստանի թագավորը նորերս թութակների փետուրներից հյուսված մի հովհար է ուղարկել ինձ: Նումիդիայի թագավորը՝ մի զգեստ, որ ջայլամեների փետուրներից է հյուսված: Ես ունեմ մի բյուրեղ, որին նայելը

կանանց արգելված է, նույնիսկ պատանիները չեն կարող նայել առանց նախօրոք գանահարության ենթարկվելու: Մի սադափյա արկղում ես ունեմ երեք սքանչելի փերուզ: Եթե այդ փերուզները ճակատիդ կրես՝ կարող ես երևակայել այնպիսի բաներ, որոնք գոյություն չունեն, իսկ եթե ձեռքիդ վրա կրես, կարելի է կանանց անպտուղ դարձնել: Դրանք մեծարժեք գանձեր են: Անդին գանձեր են դրանք: Եվ այդ բոլորը չեն: Եթենյա մի արկղիկում ես ունեմ սաթի գավաթներ, որ ոսկեղին խնձորների են նման: Եթե այդ գավաթների մեջ մի թշնամի թույն ածե՛ նրանք արծաթյա խնձորների նման են դառնում: Մի սաթազարդ արկղում ես ունեմ երկու սանդալ, որ ապակիով են պատաժ: Ես ունեմ վերնազգեստներ Սենացոց երկրներից և ապարանջաններ կարմիր հակինթներով զարդարված և հասմկաքարերով, որ եփրատ քաղաքից են բերում... վերջապես ի՞նչ ես ուզում, Սալոմե՛: Ասա՛ ինձ, ի՞նչ ես ցանկանում և ես կտամ քեզ: Ես քեզ կտամ բոլորը, ինչ և կամենաս, բացի միայն մի բանից: Ես քեզ կտամ ամեն ինչ, որ կարող եմ, բացի մի կյանքից: Ես քեզ կտամ քահանայապետի վերարկուն: Ես քեզ սրբարանի վարագույրը կտամ:

ՀՐԵԱՆԵՐ. Օ՛հ, օ՛հ...

ՍԱԼՈՄԵ. Տուր ինձ Յոքանաանի գլուխը:

ՀԵՐՈՎԴ (իր աթոռի մեջ ընկղմվելով). Տվեք սրան, ինչ որ պահանջվում է: Իրավ որ իր մոր դուստրն է սա: (Առաջին զինվորը մատենում է: Հերովդիադան հանում է տետրարքի մատից մահվան մատանին և տալիս է զինվորին, որն անմիջապես տանում է այն դահճին: Դահճը զարհուրած մարդու կերպարանք ունի): Մ'կ վերցրեց իմ մատանին: Իմ աջ ձեռքին մի մատանի կար: Մ'կ խմեց իմ գինին: Իմ գավաթում գինի կար, գինով լիքն էր իմ գավաթը: Մեկը խմեց այն: Օ՛, ես հավատացած եմ, որ մեկին դժբախտություն պիտի պատահի: (Դահճը ջրհորն է իջնում): Ա՛հ, ինչո՞ւ ես խոսք տվի: Թագավորները երբեք խոսք չպիտի տան: Եթե նրանք իրանց խոսքը չեն պահում սարսափելի է, եթե պահում են՝ նույնպես սարսափելի է:

ՀԵՐՈՎԴԻԱԴԱ. Իմ կարծիքով դուստրս լավ վարվեց:

ՀԵՐՈՎԴ. Ես համոզված եմ, որ մի դժբախտություն պիտի գա:

ՍԱԼՈՄԵ. (Թեքվում է դեպի ջրհորն ու ականջ է դնում): Ոչ մի ձայն չկա: Ես ոչինչ չեմ լսում: Ինչպես է, որ չի ճշում նա, այդ մարդը: Ա՛հ, եթե մեկն ուզենար ինձ սպանել՝ ես կծայի, կմաքառեի, չէի ուզենա տանջվել: Զա՛րկ, զա՛րկ, նաաման: Զա՛րկ, ասում եմ քեզ... Մ'չ, ես ոչինչ չեմ լսում: Մի դմի լրություն է տիրում այնտեղ: Ա՛հ, մի բան գետին լնկավ: Ես լսեցի, մի բան ընկավ: Դահճի սուրն էր այդ: Նա վախենում է, այդ ստրուկը: Թույլ տվեց, որ սուրը ցած ընկնի: Դահճը չի համարձակվում սպանել նրան: Թուլամորթ է այդ ստրուկը: Զինվորներ պետք է ուղարկել: (Նկատելով Հերովդիադայի մանկավիկեն՝ դիմում է նրան): Եկ այստե՛զ: Դու նրա՛ ընկերն ես, որ մեռավ, այնպես չէ՞: Դեռ բավական չեն մեռելները:

Առացեք զինվորներին, որ ցած իջնեն ու բերեն այն, ինչ ես պահանջում եմ, այն, ինչ տեսրարքը խոստացել է ինձ, այն, ինչ ինձ է պատկանում: (*Մանկավիկը ետ է քաշվում, Սալոմեն զինվորներին է դիմում*): Զինվորներ՝, այստեղ եկեք: իջեք ջրհորն ու բերեք ինձ այն մարդու գլուխը: (*Զինվորները ետ են քաշվում*): Տեսրարք, տեսրարք, Հրամայեցեք ձեր զինվորներին, որ բերեն Յոքանաանի գլուխը: (*Մի մեծ, և ճեռք՝ դահճի ձեռքը, երևում է ջրհորից Յոքանաանի գլուխն արծաթյա վահանի վրա պահած: Սալոմեն խլում է այն:* Հերովդը վերնազգեատով ծածկում է իր երեսը: Հերովդիադան ծիծաղում է և Հովհարով ինքն իրան Հովհարում: Նազովրեցիք ծունկ են չոքում և սկսում են աղոթիյ): Ա՛հ, գու չուզեցիր թույլ տալ, որ ես համբուրեմ քո բերանը, Յոքանաան: Ահա, Կհամբուրեմ ես այժմ: Կկծեմ իմ ատամներով, ինչպես հասած պտուղն են կծում: Ա՛յո, ես կհամբուրեմ քո բերանը, Յոքանաան: Ես ասացի այդ, այնպես չէ՞, ես քեզ ասացի այդ: Ահա ես կհամբուրեմ այժմ... Բայց ինչո՞ւ դու ինձ չես նայում, Յոքանաան: Քո աչքերը, որ այնպես սարսափելի էին, որ այնպես լի էին գայրույթով ու արհամարհանքով, աշա փակված են: Բայց քո աչքերը: Բարձրացրո՞ւ քո թերթիչները, Յոքանաան: Ինչո՞ւ չես նայում: Մի՞թե դու փախենում ես ինձնից, Յոքանաան, որ չես ուզում նայել ինձ: Եվ քո լեզուն, որ կարմիր օձի նման է, թույն թափող մի օձի, այլես չի շարժվում, այլևս ոչինչ չի ասում, Յոքանաան, այն կարմիր իծը, որ իմ վրա էր թափում իր թույնը: Տարօրինակ է դա, այնպես չէ՞: Ինչպես եղավ, որ կարմիր իմն այլևս չի շարժվում: Դու ինձ չուզեցիր, Յոքանաան: Դու ինձ մերժեցիր: Դու անարգ խոսքեր ասացիր ինձ: Դու ինձ չետ վարվեցիր որպես մի ստրկուհու, որպես մի պոռնիկ կնոջ հետ, ի՞նձ, Սալոմեիս, Հերովդիադայի դստեր, Հրեաստանի արքայադատեր հետ: Եվ ահա՛, Յոքանաան, ես գեռ ապրում եմ, իսկ դու մեռած ես, և քո գլուխն ինձ է պատկանում: Եվ ինչ կամենամ կարող եմ անել: Ես կարող եմ քո գլուխն չներին նետել, նետել օդի թռչուններին: Ա՛յո, ինչ կթողնեն շները, կուտեն օդի թռչունները: Ա՛հ, Յոքանաան, Յոքանաան, դու միակ մարդն էիր, որին ես սիրում էի: Մնացած բոլոր մարդիկ զգվանք են ներշնչում ինձ: Բայց գու, դու գեղեցիկ էիր: Քո մարմինը փղոսկրյա մի սյուն էր արծաթյա պատվանդանի վրա: Նա մի այգի էր լի աղավնիներով և արծաթյա շուշաններով: Նա արծաթյա աշտարակ էր փղոսկրյա վահաններով զարդարված: Աշխարհում չկար ոչինչ, որ ավելի սպիտակ լիներ, քան քո մարմինը: Աշխարհում չկար ոչինչ, որ այնպես սև լին, որպես քո մազերը: Աշխարհում չկար ոչինչ, որ այնպես կարմիր լիներ, ինրպես քո բերանը: Քո ձայնը մի բուրգառ էր, որ արտասովոր բուրմունք էր սփռում և երբ ես լսում էի քեզ, մի արտասովոր երաժշտություն էի լսում: Ա՛հ, ինչո՞ւ դու ինձ չնայեցիր, Յոքանաան: Քո ձևոների և հայհոյանքների եակը պահցիր քո դեմքը: Դու քո աչքերը կապեցիր այն մարդու կապով, որն ուզում է իր Աստծուն տեսնել: Եվ ահա դու տեսար նրան, քո Աստծուն,

Յոքանաան, բայց ի՞նձ, ինձ դու երբեք չտեսար: Եթե տեսնեիր ինձ – կսիրեիր դու: Ես, ես, քեզ տեսա, Յոքանաան, և սիրեցի քեզ: ՇՇ, ինչպես սիրեցի ես քեզ: Ես դարձալ դեռ սիրում եմ քեզ, Յոքանաան: Ես ոչ ոքի չեմ սիրում, բացի քեզնից... Ես ծարավ եմ քո գեղեցկության: Ես քաղցած եմ քո մարմնին: Եվ ոչ գինին, ոչ պտուղները չեն կարող հագեցնել իմ ցանկությունը: Ի՞նչ անեմ հիմա, Յոքանաան: Ոչ գետերը, ոչ մեծագույն ջրերը չեն կարող հագեցնել իմ ցանկությունը: Ես մի արքայադուստր էի, և դու ինձ մերժեցիր: Ես մի կույս էի, և դու զրկեցիր ինձ կույսությունից: Ես ողջախոհ էի, և դու հուր լցրիր իմ երակների մեջ: ԱՇ, աՇ, ինչո՞ւ դու չտեսար ինձ, Յոքանաան: Եթե դու տեսնեիր ինձ՝ կսիրեիր: Ես լավ գիտեմ, որ կսիրեիր ինձ և սիրո խորհուրդն ավելի մեծ է, քան մահվան խորհուրդը: Միայն սիրո վրա պետք է նայել:

ՀԵՐՈՎԴԻԱԼԻԱ. Ինձ դուր է գալիս իմ դստեր արածը և այժմ ես ուզում եմ այստեղ մնալ:

ՀԵՐՈՎԴԻԱԼ. ԱՇ, ազգապիղծ կինն է խոսում: Գնա՞նք: Ես այլևս այստեղ մնալ չեմ ուզում: Գնա՞նք, ասում եմ ես քեզ: Ես համոզված եմ, որ դժբախուռթյուն պիտի պատահի: Մանասե՛, Խսախա՛ր, Օզիյա՛, ջահերը հանգցրե՛ք: Ես չեմ ուզում նայել առարկաներին: Ես չեմ ուզում, որ առարկաները ինձ նայեն: Հանգցրե՛ք ջահերը: Թաքցրե՛ք լուսնյակը: Թաքցրե՛ք աստղերը: Թաքնվե՞նք մեր պալատում, Հերովդիադա: Ես սկսում եմ վախենալ:

Սուրուկները հանգչնում են ջահերը: Ասողերը չքանում են: Մի մեծ, ու ամոց է անցնում լուսնի վրայով և բալորվին ծածկում է նրան: Բեմի վրա տնթափանց խավար է իշխում: Տեղաշրջն սկսում է սանդուղքով վեր բարձրանալ

ՍԱԼՈՄԵՒԻ ԶԱՅՆԸ. ԱՇ, ես համբուրեցի քո բերանը, Յոքանաան, ես համբուրեցի քո բերանը: Դառնահամ են քո շրթունքները: Մի՞թե արյան համն է այդ: Գուցե սիրո՞ համն է: Ասում են, որ սերը դառնահամ է: Բայց ի՞նչ փույթ... ի՞նչ փույթ... ես համբուրեցի քո բերանը, Յոքանաան: Ես համբուրեցի քո բերանը:

Լուսնի մի շող ընկնում է Սալոմեի վրա և լուսավորում նրան

ՀԵՐՈՎԴ (ետ է նայում և տեսնում է Սալոմեին). Սպանեցե՛ք այդ կնոջը:

Զինվորները հարձակվում են և իրանց վահաններով ջախջախում են Սալոմեին, դստերը Հերովդիադայի, արքայադստերը Հրեաստանի: